

ՄԵԹԻ ՊՐԱՅՉԱՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄՏԱՇՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՌԱՋԱՅՆԵՆ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԷՋ

Այս օրերուն Ատրպեյճանի մէջ բուռն քննարկումներու նիւթ դարձած է «Վրեմիա նովոստէյ» թերթի Օգոստոս 6-ին հրատարակուած հարցազրոյցը ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ Մեթիւ Պրայզայի հետ: Մասնաւորապէս, տեսակէտներ կը հնչեն, թէ համանախագահը այդ հարցազրոյցի ընթացքին չէ բացառուած Լեւոնային Ղարաբաղի անկախութիւնը ճանչնալու կարելիութիւնը:

Ատրպեյճանի մէջ ԱՄՆ-ի դեսպանատան հանրային կապերու պատասխանատու ճոնաթան Հենիք ANS հեռուստաընկերութեան ըսած է, թէ անձամբ կարդացած է Պրայզայի հարցազրոյցը եւ այնտեղ Միացեալ Նահանգներու քաղաքականութեան ոչ մէկ շեղում չէ նկատած:

Ատրպեյճանի արտաքին գործոց նախարար Արազ Ազիմով ըսած է, թէ չի հաւատար, որ Պրայզայ այդպիսի բան ըսած ըլլայ:

Յիշեալ հարցազրոյցի ընթացքին Մեթիւ Պրայզայ, մասնաւորապէս ըսած է. - «Կը կարծեմ, երեք զլխաւոր սկզբունք կայ, որ կ'ազդեն բանակցութիւններու վրայ. հրաժարիլ ուժի կիրառումէն, պետութիւններու տարած քայլին ամբողջականութեան ճանաչումը եւ ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքը: Կը կարծեմ, իւրաքանչիւր հակամարտութեան մէջ՝ ըլլալ վրաստանի, Կովկասի, ցանկա-

Շարք էջ 4

ՍԻՏՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՆ Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 120-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Յուլիս 29-Օգոստոս 4 Սիտնիի մէջ տեղի ունեցած հանդիսութիւններու ընթացքին, Աւստրալիոյ Հայ համայնքը նշեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան 120-ամեակը: Այս առթիւ Սիտնի ժամանած էին Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ ընկեր Գրիգոր Խոտանեան եւ ընկերուհի Գաթիա Խոտանեան, ինչպէս նաեւ Գանատային «Լուսաբաց» շաբաթաթերթի իմբազիր Պրն. Արմէն Գիւրքճեան:

Կիրակի, Յուլիս 29-ի երեկոյեան «Հայ Կեդրոն» սրահէն ներս տեղի ունեցաւ Ս.Դ.Հ.Կ. 120-ամեակի եւ Հնչակեան Քսան Կախաղաններու տարելիցի հանդիսութիւնը, որուն ներկայ էին Աւստրալիոյ Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Աղան Արքեպիսկոպոս Պալիոզեան, Նիւ Սաութ Ուէյլը նահանգի խորհրդարանի անդամ Երեսփոխան՝ Օրդ. Կլաուիո Պէրէճիքլեան, Համայնքային Յարաբերութեանց պետական յանձնաժողովի ատենապետ Պրն. Ստեփան Քրքեաշարեան, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան ներկայացուցիչ Պրն. Վարուժան Իսկէնտէրեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան, ՀԲԸՄ-ի, Հայ եկեղեցական խորհուրդի եւ գաղութէն ներս գործող հայկական բարեսիրական, կրթական եւ մշակութային կազմակերպութիւններու ու միութիւններու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ ներկաներու հոծ բազմութիւն մը:

Հանդիսութիւնը սկսաւ Աւստ-



120-ամեակի կարկանդակը կտրելու պահուն՝ ընկ. Գրիգոր Խոտանեան շրջապատուած Աւստրալիոյ Վարչ Մարմինի անդամներով

րալիոյ, Հայաստանի եւ Հնչակեան Կուսակցութեան քայլերգներով, որ դաշնամուրի վրայ նուագեց Օր. Նաթալի Թոմուզեան: Ապա, ներկաները յոտնկալս լուծեամբ չարգեցին յիշատակը՝ Քսան Կախաղաններուն եւ Հայ ժողովուրդի բոլոր նահատակներուն:

Երեկոյի հանդիսավար ընկ. Թորոս Պոյաճեան իր բացման խօսքին մէջ անդրադարձաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հայ ժողովուրդի ծոցէն ծնած առաջին քաղաքական կուսակցութիւնը ըլլալու հանգամանքին եւ 1887-էն սաղին հայ ժողովուրդի ծառայութեան ճամբուն վրայ անոր ստանձնած գոհողութիւններուն:

«92 տարիներ առաջ կախաղան բարձրացող 20-ներու Կուսակցութիւնը 120 տարիէ հաւատարիմ մնացած է իր գաղափարախօսութեան, որով հիմնական նպատակը եղած է ծառայել իր սեփական ժողովուրդին, անշահախնդրօրէն, առանց հետապնդելու գաղտնի կամ անձնական ծրագիրներ, նպատակ՝ որ մինչեւ այսօր կը մնայ ի գործ»,- յայտարարեց ընկ. Պոյաճեան:

«Հնչակեան Կուսակցութիւնը 92 տարիներ առաջ չհաւատաց Երիտթուրքերու 1908-ին մշակած ու յայտարարած սահմանադրութեան, որ համայն Օսմանեան քա-

Շարք էջ 7

ԼԻԻԴՄԻԼԱ ՍԱՐԳՍԵԱՆ. «ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ՆՈՐ ԿԵՐՊԱՐՈՎ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՍՏՈՅ»:
 Նախագահական ընտրութիւններէն առաջ Հնչակեան Կուսակցութիւնը անհրաժեշտ կը նկատէ ընդդիմադիր քաղաքական ուժերու համախմբումը միասնական թեկնածուի շուրջ: Իսկ հաւանական միասնական թեկնածուներէն կուսակցութեան ատենապետ Լիւդմիլա Սարգսեան լրագրողներու հետ հանդիպման ժամանակ յայտնեց նաեւ երկրի նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի անունը:

«Տէր-Պետրոսեանի ջատագովը չեմ եղել ժամանակին, բայց այսօրուայ իրավիճակում ես տեսնում եմ ի դէմս Տէր-Պետրոսեանի մի մարդու, որը կարող է մտնել պաշարի մէջ՝ եթէ կարողանայ մեզ համոզել, որ ինքը այն միակ նախընտրելի թեկնածուն է, որը յաղթելու կամք կարող է դրսևելու»,- ըսաւ Հնչակեան կուսակցութեան ատենապետը:

Հակադարձելով այն հարցին, թէ արդեօք ժողովուրդը մոռցած է

առաջին նախագահի օրօք եղած խնդիրները, Լիւդմիլա Սարգսեան ըսաւ. - «Չի մոռացել... Բայց, կարծում եմ, որ Տէր-Պետրոսեանը եւս հետեւութիւններ է արել իրենց սխալների հետ կապուած: Եւ նա այսօր կարող է ներկայանալ մի նոր կերպարով»:

Այսուհանդերձ, ան չպնդեց, թէ Կուսակցութիւնը որպէս միասնական թեկնածու կը տեսնէ միայն Լեւոն Տէր-Պետրոսեանին: Կարեւորը, ըստ Սարգսեանի, «սկզբունքն է, միաւորուելու անհրաժեշտութիւնը»,- «Եթէ ընդդիմադիր դաշտը ընդունակ չէ հետեւութիւններ անել պաշտօնատեղի ընտրութիւններին յետոյ եւ ընդունակ չէ համախմբուելու, այդ դէպքում մենք բոլորս այլեւս անելիք չունենք քաղաքական դաշտում»:

Լեւոն Տէր-Պետրոսեանը կամ անոր գրասենեակը առայժմ որեւէ յայտարարութեամբ հանդէս չեն եկած 2008-ի նախագահական ընտրութիւններու առնչութեամբ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԵՂԱԴՐՈՒԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԵՂԾԵԼՈՒ ՄԷՋ

Լիբանանի նախկին նախագահ եւ Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար Ամին ճէմայէլ մեղադրեց Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, Օգոստոս 5-ին տեղի ունեցած երեսփոխանական մասնակի ընտրութիւններու ընթացքին Պուրճ Համուտի հայկական թաղամասերէն ներս քուէները կեղծելու եւ հայ ընտրողներու ազատօրէն քուէարկելու իրաւունքը կաշկանդելու մէջ:

Ամին ճէմայէլ այս ամբաստանութիւնները կատարեց երբ յայտնի դարձաւ, որ Լեւոնալիբանանի Մէթիւի շրջանէն ներս տեղի ունեցած քուէարկութեան ընթացքին 80 հազար քուէներու մէջ 418 ձայնով ձախողած էր տիրանալու իր որդուին՝ Փիէր ճէմայէլի սպանութեան հետք թափուր մնացած աթոռին:

Ընտրութիւններու արդիւնքները յայտնի դառնալէ անմիջապէս ետք կատարած իր յայտարարութեան մէջ, Ամին ճէմայէլ յու-

զական ելոյթ մը ունենալով իր պարտութեան համար մեղադրեց հայութիւնը, կասկածի տակ առնելով նոյնիսկ անտնց լիբանացիութիւնը: Աւելի ուշ սակայն, Նախկին նախագահը սրբազրելով ինքզինքը յստակացուց, որ իր մեղադրանքը կ'երթար դաշնակցութեան եւ ոչ թէ հայութեան, որով հանդէպ ան ունի մեծ յարգանք եւ որով անդամներէն շատեր քուէարկած էին ի նպաստ իրեն:

Ամին ճէմայէլի յայտարարութեան շուրջ ՀՅԴ մեծ աղմուկ բարձրացնելով, պահանջեց որ ան ներողութիւն խնդրէ: Սակայն, ճէմայէլ այցելելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.-ին, անգամ մը եւս յստակացուց որ իր քննադատութիւնը ուղղուած էր մէկ կուսակցութեան եւ ոչ թէ ամբողջ հայութեան: Ան նաեւ յայտարարեց, որ իւրաքանչիւր կուսակցութիւն ազատ է իր քաղաքա-

Շարք էջ 4

ԼՈՒՐԵՐ

ԺԻՐԱՅԻՐ ՍԵՖԻԼԵԱՆ. «ԱՅՆ, ԻՆՉ ԿԱՏԱՐԻՈՒՄ Է ՍԵՋ ՅԵՏ՝ ԲՈՆՈՒԹԻՒՆ Է»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Հայաստանի ազգային անվտանգության ծառայության «Երեւան» քրեակատարողական հիմնարկում գտնուող ազատամարտիկ, Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆիլեանը համարում է, որ իր եւ «Հայ կամաւորականների համախմբում» նախաձեռնութեան անդամ վարդան Մալխասեանի, ինչպէս նաեւ վահան Արոյեանի նկատմամբ դատական հետապնդումը «բռնութիւն է»:



Ազատամարտիկներ Վարդան Մալխասեան եւ Ժիրայր Սեֆիլեան

«Այն, ինչ կատարուեց այս 8 ամսուայ ընթացքում, սա բռնութիւն է, երբ մարդը յանցանք չի գործել, անմեղ լինելով հանդերձ, դու [իշխանութիւնը] բանտարկում ես», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ բացառիկ հարցազրույցում ասաց Սեֆիլեանը՝ շարունակելով. - «Ուզում եմ յիշեցնել, որ բռնութիւնը բռնութիւն է ճնշում. ինչքան շուտ դադարեցնեն այս բռնութիւնը, այնքան լաւ իրենց համար»:

Սեֆիլեանը վերահաստատեց իր համոզմունքը, թէ իր նկատմամբ հետապնդումն իրականացւում է երկրի նախագահի կարգադրութեամբ՝ պարզաբանելով, թէ արդէն 6-7 տարի է, ինչ իշխանութիւնները «տհաճութեամբ էին վերաբերում» իր գործունէութեանը, այդ տարիների ընթացքում իրեն բազմիցս «զգուշացրել են դադարեցնել գործունէութիւնը ազատագրուած տարածքների հետ կապուած», ինչպէս նաեւ՝ «գերծ մնալ ընդդիմադիր ուժերի հետ շփումներից»:

Իշխանութիւնները, ըստ Սեֆիլեանի, վախեցան, երբ 2006-ին ստեղծուեց «Հայ կամաւորականների համախմբում» շարժումը: «Որովհետեւ իրօք, եթէ այսօր գոյութիւն ունենայ մի ուժ, մի կազմակերպութիւն, որը իրօք անշահախնդրօրէն ծառայելու է մեր ժողովրդին, ինչպէս մենք ենք ամբողջ պատերազմի ընթացքում անշահախնդրօրէն ծառայել... Իրենք, սա տեսնելով, նոյնպէս փորձեցին կանխել», - փաստարկեց նա:

Բացի այդ, Սեֆիլեանի խօսքերով, այլ պատճառ էլ կայ. - «Քանի որ ես միշտ չեմ ընդունել նաեւ [Ռոբերտ Գոչարեանին] որպէս նախագահ, այսօր էլ չեմ ընդունում՝ ինքը նախագահ չէ, որովհետեւ դա [2003 թուականին] ընտրութիւն չի եղել՝ նշանակում է տեղի ունեցել... Ընտրութիւնները մեր երկրում իմիտացիա է, շուտ է... Իրենք գիտեն մէկ ձեւ կառավարելու՝ բռնութիւն, վարչական լծակ եւ փող, կաշառք»:

ՐԱՅԱՍԱՆ-2025

Համաշխարհային բանկի գեկոյցի համաձայն, որը վերաբերում է յետխորհրդային տարածութեան երկրների ժողովրդագրական վիճակին, մինչեւ 2025 թուականին ԱՊՀ գրեթէ ամբողջ տարածքում եւ Մերձբալթեան երկրներում սպասուած է բնակչութեան անկում: ՀԲ կանխատեսման համաձայն, բացառութիւն են կազմելու միայն Տաշիկատանը, Ուզբեկստանը, Կրգզստանը, Թուրքմենիստան եւ Ատրայթյճանը: Մեր հարեաններ են հակառակորդը, մինչեւ 2025 թուականը կ'ունենայ բնակչութեան 1,5 միլիոն աճ, այն դէպքում, երբ նոյն գեկոյցի գնահատմամբ, Հայաստանի բնակչութիւնն այդ ժամանակահատուածում կը նուազի 200 հազարով:

«ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ» ԱԿՏԻՒՍՆԵՐԸ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԲՈԼՈՐ ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐԸ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Բաֆֆի Յովհաննիսեանը եւ «Ժառանգութիւն» կուսակցութեան հիմնականում մայրաքաղաքի եւ 15-րդ ընտրատարածքի երիտասարդակտրիստներից բաղկացած ներկայացուցիչներն այսօր աւարտեցին իրենց առաջին խորհրդարանական քարոզարշաւը՝ այցելելով բոլոր 84 ընտրաշրջանները, յայտնում են կուսակցութեան մամուլի ծառայութիւնից: Անցնելով Թալիշի եւ 80 գիւղերի՝ Արագած լեռան բարձրավանդակից մինչ Արաքս եւ Ախուրեան գետերի եզերքով, նրանք ներկայացրին իրենց ծրագրերը Աժ-ում ժողովրդավարութեան նոր նախադիմացի ստեղծման վերաբերեալ, որը ներառում է հասարակական պատասխանատուութիւնը եւ օրէնքի կանոնների կիրառումը ողջ պետութիւնում, ապա եւ շրջանում առաւել բարձր ուսումնական

համակարգի հիմնումը, տնտեսութեան եւ գիւղատնտեսութեան զարգացման եւ բարելաւման հնարաւոր պայմանները բոլոր քաղաքացիների համար, ինչպէս նաեւ ուղղման եւ ջրային ռեսուրսների տեղաբաշխման, գազի մատակարարման, ճանապարհային եւ հիմնական կառուցների առաջնային խնդիրները: «Ժառանգութիւն» կուսակցութիւնը քաղաքում եւ գիւղերում կը շարունակի քարոզարշաւը՝ նպատակ ունենալով մինչ ընտրութեան օրը՝ Օգոստոսի 26-ը, առաւել լաւ հասկանալ տեղացիների կարծիքներն ու տեսակէտները, ճշգրտել նրանց խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Բաֆֆի Յովհաննիսեանը եւ 5 այլ թեկնածուներ պայքարում են 15-րդ ընտրատարածքի թափուր տեղի համար:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ ԵՆ ԵՂԵՆԻՑ ՓՐԿՈՒԱԾՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ՅԱՄԱԳՈՒՄԱՐԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Նախապատրաստուած է Եղեռնից փրկուածների ժառանգների ներկայացուցիչների երրորդ համագումարը: Համագումարի նախապատրաստման եւ անցկացման կազմկոմիտէի անդամ Կարէն Միքայէլեանը այսօր Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանեանի հետ հանդիպման ժամանակ տեղեկացրել է, որ արդէն կայացել են կազմակերպական մի քանի նիստեր, հրապարակուել է լիազօր ներկայացուցչական մարմիններ հիմնելու մասին յայտարարութիւնը: Կարէն Միքայէլեանը շեշտել է երրորդ համագումար հրաւիրելու անհրաժեշտութիւնը համագաղթին խնդիրները միասնաբար առաջադրելու եւ համատեղ ջանքերով լուծելու գործում:

Հայաստանի արտգործնախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան փոխանցմամբ, Վարդան Օսկանեանը կարեւորել է դեռեւս 1917 եւ 1918 թուականներին Երեւանում կայացած նախորդ երկու համագումարների ընդհատուած գործընթացները շարունակելու եւ երրորդ համագումարը հրաւիրելու նախաձեռնութիւնը: Նախարարը նշել է, որ նման ներկայացուցչական համագումար հրաւիրելու համար անհրաժեշտ է նախապատրաստական մեծ աշխատանք կատարել Սփիւռքի հայ համայնքներում եւ յատկապէս աշխարհիկ ու հոգեւոր կազմակերպութիւնների հետ:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ԿԸ ՓՈԽԻ ԸՇԿ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: «Լեւոն Տէր-Պետրոսեանն այսօր սովորական քաղաքական կուսակցութեան լիդեր չէ: Նա առաջին նախագահն է: Դա պատմական երեւոյթ է եւ իրողութիւնների մեծ շնորհը պատկանում է Լեւոն Տէր-Պետրոսեանին»: Այդ երեք նախադասութիւնը Օգոստոսի 15-ին Փաստարկ ակումբում ինչպէս եւ շեշտեցին Վահագն Մանուկեանը: Լրագրողների հետ հանդիպմանը նրան խնդրել են յայտնել իր կարծիքը Լեւոն Տէր-Պետրոսեանի հաւանական առաջադրման վերաբերեալ, այդ համատեքստում գնահատելով Սերժ Սարգսեանի յաջողութեան շանսը: «Ես ինձ շատ վատ եմ զգում, երբ այսօր քաղաքական ուժերը

շահարկում են Լեւոն Տէր-Պետրոսեանի անունը: Նա խոհեմ, կշռադատ գործիչ է եւ ինքը կարող է իր տեսակէտը յայտնել», ասում է Գալուստ Սահակեանը: Նա ռոմանտիկ է համարում այն մտեցումը, թէ Լեւոն Տէր-Պետրոսեանը իրաւունք չունի չառաջադրուել 2008 թուականին: Ըստ Գալուստ Սահակեանի, եթէ Տէր-Պետրոսեանն ունենար առաջադրուելու մտադրութիւն, ապա երկու երեք տարի առաջ որեւէ քաղաքական թիմ կը դնէր այդ քայլի հիմքը: Սահակն շեշտեց, որ Տէր-Պետրոսեանի առաջադրումը իհարկէ կը ստիպի իրենց փոխել ռազմավարութիւնը: Բայց ընտրութեան ելքը, ըստ Գալուստ Սահակեանի, դրանից չի փոխուի:

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ» ՈԱԴԻՈՎԱՅԱՆԸ՝ «ԱՐ ՈԱԴԻՈ»ՈՎ

«Ար-ռադիո» միջմայրցամաքային ռադիոկայանի եւ Ամերիկեան հեռարձակողների տնօրէնների խորհրդի միջեւ կնքուած պայմանագրի համաձայն «Ազատութիւն» ռադիոկայանի հայկական ծառայութեան ծրագրերը Օգոստոս 15-ից օրական 2 ժամ 5 րոպէ տեւողութեամբ կը սկսեն վերահեռարձակուել «Ար-ռադիո»-ի ցանցով: Այդ մասին ասուած է Հանրային ռադիոընկերութեան տնօրինութեան հաղորդագրութեան մէջ: Միւս կողմից ժամանակ, մինչեւ սոյն թուականի Օգոստոսի 31-ը ներառեալ կը շարունակի «Ազատութիւն» ռադիոկայանի հաղորդումների գուզահեռ վերահեռարձակումները իր եթերով, որպէսզի հեռարձակման փոփոխութիւնների վերաբերեալ հանրութիւնը ապահովուած լինի անհրաժեշտ տեղեկատուութեամբ եւ անցումը կատարուի սահուն»:

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ. «ՄԵՐ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՍՔՈՒՄ ՅԱՐԵՒԱՆՆԵՐԻ ՅԵՏ ԲԱՐԻԴՐԱՑԻԱԿԱՆ ԿԱՊԵՐՆ ԵՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Հայաստանի արտաքին քաղաքականության հիմքում ընկած է բոլոր հարեւանների հետ բարիդրացիական կապերի հաստատումն ու պահպանումը, տարածաշրջանային եւ միջազգային բեմահարթակում ակտիվ դերակատարութեան ապահովումն ու խորացումը: Այս մասին ասել է արտգործնախարար Վարդան Օսկանեանը իրանում հրատարակուող «Յոյս» պարբերականին տուած հարցազրույցում:

Երկրի արտաքին քաղաքականության առաջնահերթութիւնների թւում Օսկանեանը նշել է, մասնաւորապէս, արդի գործընթացներում Հայաստանի անվտանգութեան եւ տնտեսական զարգացման շահերից բխող տեղի ապահովումը, գլոբալ նշանակութեան ծրագրերում, մասնաւորապէս միջազգային հասարակչութեան դէմ պայքարին Հայաստանի մասնակցութիւնը, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եւրամիութեան հետ փոխյարաբերութիւնների զարգացումը, մասնակցութիւնը եւրոպական ինտեգրացման գործընթացներում, եւրատանտեան եւ յետխորհրդային տարածքի համագործակցութեան կառուցներում:

Տարածաշրջանային օրակարգի առաջնահերթ հարցերի թւում նախարարը նշել է անմիջական հարեւանների՝ Վրաստանի եւ Իրանի հետ բարիդրացիական յարաբերութիւնների հետագայ զարգացումը, Թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորումը, դարաբաղեան հակամարտութեան կարգաւորումը, Ատրպէյճանի հետ յարաբերութիւնների նորմալացումը, տարածաշրջանային կայունութեան ամրապնդումը, փոխշահաւէտ համագործակցութեան ծաւալումը, այստեղ իրականացուող միջազգային տնտեսական ծրագրերում երկրի մասնակցութեան ապահովումը:

Անդրադառնալով դարաբաղեան խնդրին՝ Վարդան Օսկանեանը նշել է, որ թէեւ Յունիսին Սանկտ Պետերբուրգում կայացած Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների հանդիպման արդիւնքում «որեւէ տեսանկի առաջընթաց չգրանցուեց, սակայն մենք շարունակելու ենք մեր դրական ներգրաւուածութիւնը ունենալ այս զգալուն եւ

կարեւոր գործընթացում, չինայեւ լով մեր ջանքերը՝ կարգաւորելու հակամարտութիւնը եւ նպաստելու տարածաշրջանում տեւական խաղաղութեան հաստատմանը»:

Արտգործնախարարն ընդգծել է Հայաստանի սերտ, բարիդրացիական յարաբերութիւնները Իրանի հետ, որոնք, ըստ նրա, պարարտ հող են նախապատրաստել տարբեր բնագաւառներում երկկողմ նախագծերի իրականացման համար: Նշելով, որ այս տարուայ Մարտի 19-ին Հայաստանի եւ Իրանի նախագահների մասնակցութեամբ բացուեց Իրան - Հայաստան գագաթաժողովը եւ երկու երկրների կառավարութիւնների միջեւ ստորագրուեց Արաքս գետի վրայ հիդրոէլեկտրակայաններ կառուցելու եւ շահագործելու բնագաւառում համագործակցութեան համաձայնագիրը, Օսկանեանը յայտնել է, որ ներկայումս քննարկուած են էներգետիկ ոլորտում համագործակցութեան այլ ծրագրեր: Նրա հաւաստմամբ, հայ - Իրանական համագործակցութիւնը բաւական ընդգրկուն է եւ չի սահմանափակուած միայն էներգետիկ համագործակցութեամբ. - «Արդիւնաւէտ եւ ակտիւ համագործակցութիւն է ընթանում նաեւ տրանսպորտի, առեւտրի, գիւղատնտեսութեան, զիտութեան եւ կրթութեան, մշակոյթի բնագաւառներում»:

Սփիւռքեան պարբերականին տուած հարցազրույցում արտգործնախարարն անդրադարձել է նաեւ երկքաղաքացիութեան խնդրին՝ շեշտելով. - «Երկքաղաքացիութեան ինստիտուտի ընդունումը Հայաստանի կողմից ողջունելի է եւ այն կարելի է միայն դրական համարել: Այնպիսի ժողովուրդ, ինչպիսին է աշխարհասփիւռ հայ ժողովուրդը, հնարաւորութիւն կ'ունենայ մշտապէս կապուած լինելու իր Հայրենիքին՝ նաեւ երկրի քաղաքացիութիւնը ունենալով: Միաժամանակ, Հայաստանի անկախութեան այս նոր փուլում, Հայաստանը պէտք է գործի դնի այն ճկունութիւնը, որն իր ազգային առաջնահարկութիւններով մասն է կազմում, որպէսզի գտնուի ստեղծի նոր ռեսուրսներ՝ իր դիրքերը պահպանելու համար: Այս նոր պաշարների մի մասը կը գայ Հայաստանից, իսկ միւսը՝ Սփիւռքից»:

ԻՍԹԱՆՊՈՒԼԻ «ՌՈՔ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՅԱՄԱՐ» ՓԱՌԱՏՕՆԻՆ ՅԱՅ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆ ՅՐԱՆԴ ՏԻՆՔԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՆԱԽԱԳԾՈՎ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Հայ երաժիշտները «Ալօս» թերթի սպաննուած խմբագրապետ Հրանդ Տինքի յիշատակին նուիրուած նախագծով մասնակցելու են Օգոստոսի 23-ին Իսթանպուլում կայանալիք BARISAROCK՝ «Ռոք խաղաղութեան համար» փառատօնին:

Մայիսին յայտնի երաժիշտ Արտօ Թունջբոյաջեանի եւ թուրք երգահան Եաշար Կուրտի նախաձեռնած՝ Հրանդ Տինքի յիշատակին նուիրուած մեծ նախագծի առաջին քայլը հայ եւ թուրք երաժիշտներից կազմուած խմբի ստեղծումն էր, որը նախաձեռնութեան հեղինակների անուններով կոչուած է «Եաշար» (Թարգմանաբար նշանակում է «ապրող»): Այդ խումբն էլ Իսթանպուլեան փառատօնին կը մասնակցի իր

առաջին ձայնակաւառակի ստեղծագործութիւններով, որոնց հեղինակներն են Կուրտը եւ Թունջբոյաջեանը:

Բարեգործական փառատօնը կազմակերպուած է մի խումբ ակտիւիստների կողմից սկսած 2003 թուականից՝ ընդդէմ պատերազմների, գլոբալացման համատեքստում ընթացող երաժշտութեան եւ մշակոյթի անցանկալի ձեւախեղումների:

Աւանդաբար բաց երկնքի տակ անցկացուող փառատօնն այս տարի համախմբելու է 100 հազարից աւելի մասնակիցների ու հիւրերի աշխարհի տարբեր երկրներից, հիւրընկալելու է ընդհանուր առմամբ 62 երաժշտախմբերի: Դրանցից միայն վեցն են այլ երկրներից, այդ թւում՝ «Եաշար»-ը:

ԴԵՆԻԷԼ ՖՐԻԴ. «ՊԱՏԵՐԱԶՍԸ ԿԸ ԿՈՐԾԱՆԻ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԱՊԱԳԱՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնական Դենիէլ Ֆրիդը «Ազատութիւն» ռադիոկայանի ատրպէյճանական ծառայութիւնը տուած հարցազրույցում համոզմունք է յայտնել, որ պատերազմը կործանարար կը լինի Ատրպէյճանի ապագայի համար:

Այն հարցին, թէ արդեօք հիմա դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հասնելու յոյսը աւելի նուազ է, եւ արդեօք երկու երկրների նախագահները չկորցրեցին հնարաւորութիւնը, քանի որ երկու երկրներում արդեն նախընտրական գործընթացներ են սկսուած, Ֆրիդը պատասխանել է. - «Ես չեմ ուզում քննադատել, բայց, կարծում եմ, բոլորս հիասթափուած ենք: Վերջին հանդիպումը արդիւնք չտուեց՝ արդիւնք, ինչը մենք ակնկալուած էինք: Լաւ բանակցութիւններ, ես կ'ասեի՝ լաւ երկխօսութիւն էր ընթանում, որոշ առաջընթաց էր արձանագրուել»:

Նա յոյս է յայտնել, որ «ինչ-որ կէտում երկու երկրների ղեկավարները ճանապարհ կը գտնեն առաջ շարժուելու համար»:

«Ի վերջոյ, սա բխում է իւրաքանչիւրի շահերից», - շեշ-



Դենիէլ Ֆրիդ

տել է ամերիկացի բարձրաստիճան դիւանագէտը: - «Ատրպէյճանի ապագան մշուշոտ կը լինի, քանի դեռ այս հարցը լուծուած չէ»:

Ֆրիդը համոզմունք է յայտնել, որ դարաբաղեան խնդիրը կարող է լուծուել միայն խաղաղ ճանապարհով. - «Պատերազմը կը կործանի Ատրպէյճանի ապագան եւ ոչ ոքի լաւ բան չի տայ: Խաղաղ կարգաւորումն է այն ճանապարհը, որով պէտք է առաջ շարժուել»:

«Մենք այսքան ճանապարհ ենք անցել եւ, յուսով եմ, կը հասնենք խնդրի լուծմանը», - ամփոփել է ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնականը:

ՄԵԹԻ ՊՐԱՅՁԱՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

ցած վայրի մէջ՝ Աբխազիայի, Ղարաբաղի, Մոլդովայի նոյնպէս, եթէ մարդիկ փոխգիշում կը փնտռեն, ապա պէտք է փոխգիշումը գտնել այս երեք սկզբունքներու միջեւ»:

Նոյն պարբերութեան մէջ Մեթիւ Պրայզա ըսած է. - «Ես, օրինակ, կը ներկայացնեմ երկիր մը, որ հիմնադրուած է անշատողականներու կողմէ: Որոշ ժամանակ ետք միւս երկրները ճանչցան մեր անկախութիւնը, այդ նորմալ է. մենք ինքնորոշուելու իրաւունք

ստացանք: Եւ նոյն այդ ժամանակ՝ 18-րդ դարուն, մի քանի տարի ետք, արդէն Սպանիայի նախկին գաղութները մեր օգնութեան կարիքն ունէին, որպէսզի մենք ճանչնանք անոնց անկախութիւնը, բայց մենք ըսինք՝

«ոչ, շնորհակալութիւն, այդ մեր հետաքրքրութիւններու մէջ չէ»: Անոնք կ'ըսէին՝ «բայց չէ որ մենք ճանչցանք ձեր անկախութիւնը», բայց մենք պատասխանեցինք, որ իւրաքանչիւր դէպքի համար մօտեցումներ կը տարբերին մէկըմիւսէն»:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՆԸ ԿԸ ՄԵՂԱԴՐՈՒԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՆՆԵՐԸ ԿԵՂԾԵԼՈՒ ՄԵՋ

Շարունակուած էջ 1-էն

կան եւ ընտրական կողմնորոշումներուն եւ դաշինքներուն մէջ, սակայն ազատ չէ ընտրութիւնները կեղծելու մէջ: Ան աւելցուց որ, իր կուսակցութիւնը այժմ մանրակրկիտ քննութիւն կը կատարէ Պուրճ Համուտի մէջ քուէարկողներու ցուցակներուն շուրջ:

Ամին Ժէմալյէի գայրոյթին գլխաւորաբար դրդապատճառը եղած էր այն, որ Պուրճ Համուտի քուէատուփերէն մէկուն մօտ, իր ներկայացուցիչները ճանչցած էին հայ քուէարկող մը, որ երկրորդ անգամ ներկայացած էր քուէարկութեան: Անոնք անմիջապէս տեղեկագիր պատրաստելով յանձնած էին ոստիկանութեան: Այլ վայրի մը մէջ, հայ քաղաքացի մը ներկայանալով տեղամաս նկատած էր որ, իր տեղը արդէն ուրիշ մէկը քուէարկած էր: Ան եւս բողբոյն ներկայացուցած է ոստիկանութեան: Կը կարծուի որ ասոնք եզակի դէպքեր չէին եւ նմանօրինակ հա-

զարաւոր պարագաներ կան, մասնաւորապէս որ Պուրճ Համուտի մէջ տեղի ունեցող ընտրութիւններուն շուրջ անցեալին եւս եղած են բողբոյններ հայկական եւ ոչ հայկական շրջանակներու կողմէ:

Վերադառնալով բուն ընտրութիւններու յայտնեք, որ յաղթող թեկնածու՝ Տոքթ. Քամալ Խուրի կը վայելէր նախկին գորավար Միշէլ Աունի եւ ընդդիմադիր այլ խմբաւորումներու, ներառեալ ՀՅԴ-ի նեցուկը:

Ի տարբերութիւն այլ համայնքներու, ուր ընտրութեան մասնակցողներու տոկոսը կը հաշուէր 50 եւ աւելի, Հայութեան 70 տոկոսը չէ մասնակցած այս ընտրութիւններուն: Յուցակներու վրայ եղող 39 հազար հայ քուէարկողներէն ընտրութիւններուն մասնակցած են 27.7 տոկոսը: Ծուրջ 10 հազար հայ ընտրողներու 8 հազարը քուէարկած են ի նպաստ յաղթող թեկնածու Քամալ Խուրիի, իսկ 2 հազարը իրենց ձայները տուած են նախկին նախագահ Ամին Ժէմալյէին:

Չեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շարաքաքերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 Email: massis2@earthlink.net

ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ

ՆԱԽԻՉԵԻԱՆ. ՄԵԿ ԱՅԼ ԱՏՐՊԵՅՃԱՆ

Նախիջեւանում, որ Ատրպէյճանի անբաժանելի մասն է կազմում, բայց աշխարհագրական առումով բոլորովին անջատ է նրանից, մարդկանց կեանքը լիովին տարբերում է երկրի մնացած մասում ապրողների կեանքից: Այս ինքնավար հանրապետութեան հիմնախնդիրներն են արտագաղթն ու ծանրագոյն սոցիալական պայմանները:

Նախիջեւան հասնելն անգամ հեշտ չէ: Երկրի մնացած հատուածից նրան բաժանում է Հայաստանը, վերջին 16 տարիների ընթացքում Նախիջեւանը գրկուած է երկրի մնացած հատուածի հետ ցամաքային հաղորդակցութիւնից: Նախիջեւան տանող միակ ճանապարհը օդային ուղին է Պաքուից, այնպէս որ մայրաքաղաքի «Հէյտար Ալիե» օդանավակայանում միշտ տոմս ցանկացողների մեծ հերթ է գոյանում:

1999թ. անցկացուած մարդահամարի տուեալների համաձայն Նախիջեւանի բնակչութիւնը կազմում է 370 000, սակայն իրականում այդ մարդկանցից շատերը գուցէ ապրում են Պաքուում կան հարեւան թուրքիայում:

Երեկոյեան ժամը 9-ին գաւառական մայրաքաղաք Նախիջեւանում փողոցները գրեթէ դատարկ են: Կենտրոնական Ալիե աջգին նոյնպէս մարդաշատ չէ: Նախիջեւանի պետական համալսարանի ուսանող իւրքար Հուսէյնովը բացատրում է. «Երիտասարդները վախենում են այգի գնալ, յատկապէս երեկոները: Միեւնոյն է, ոստիկանութիւնը փակում է բոլոր չափանանները [թէյյատները] երեկոյեան ժամը տասից յետոյ: Քաղաքային իշխանութիւնները նաեւ ոչ պաշտօնապէս արգելում են տղաներին եւ աղջիկներին միասին գբօսնել: Աղջիկները չեն կարող նաեւ կարճ կիսաշրջագգեստ կրել»:

Մաքրութեամբ Նախիջեւանը կարող է համեմատուել եւրոպական ամենամաքուր քաղաքների հետ, եւ փողոցներում կամ պուրակներում ծխախոտի մնացուկ անգամ չէք գտնի: Սրա պատճառն այն է, որ սեղաններին ստիպում են մասնակցել պարտադիր հանրային աշխատանքներին. խորհրդային տարիներին դա շաբաթօրեակ էր կոչւում:

«Հանրային ոլորտի կազմակերպութիւնների աշխատակիցները եւ Նախիջեւանի զօրամասի

զինուորները յաճախ են փողոցները մաքրում», - ասում է տեղացի Գազանֆար Ագաեւը:

Ընդդիմադիր Մուսաւաթական կուսակցութեան անդամ Մուխտար Եուսիֆովի խօսքերով՝ «Բժիշկները, բուժքույրերը եւ ուսուցիչները սպիտակեցնում են պատերը, աւլում փողոցները եւ խնամում ծառերը: Եթէ որեւէ մէկը հրաժարում է աշխատել, նրան պատիժ է սպառնում, քանի որ հրամանը գալիս է հենց Վասիֆ Թալիբովից»:

Թալիբովը Նախիջեւանի խորհրդարանի նախագահն է եւ տարածաշրջանի դե ֆակտո ղեկավարը:

«Վասիֆ Թալիբովը ամբողջ Նախիջեւանի լիակատար ղեկավար է», - ասում է բժիշկ Վահիդը: «Կարծես ամբողջ հանրապետութիւնը նրա սեփականութիւնը լինի: Հենց այնպէս չէ, որ նրան Նախիջեւանի խան են կոչում»:

Վահիդն ասում է, որ «խանը» երբեմն զարմանալի հրամաններ է արձակում: Օրինակ, արգելում է բնակարանների պատշգամբներում լուսացք կախել կամ գաւառական մայրաքաղաքում հին մեքենաներ վարել այն պատճառով, որ դրանք փչացնում են քաղաքի տեսքը:

«Ներկայ խիստ ուեժիմը Նախիջեւանը թուրքմենիստանի նման մի վայր է դարձրել», - ասում է տաքսի վարորդներից մէկը՝ նկատի ունենալով Կենտրոնական Ասիայի ամենաճշուած պետութիւնը:

Ինչեւէ, կառավարամէտ քաղաքական գործիչներն ասում են, որ խիստ կանոնակարգն արդարացուած է: Ֆազաիլ Ագամալին՝ Անա Վաթան («Հայրենիք») կուսակցութեան նախագահը, յայտնել է IWPR-ին. «Վասիֆ Թալիբովին չի կարելի մեղադրել մեր ինքնավար հանրապետութիւնում դաժան ուեժիմի համար: Այս տարածաշրջանը էքսկլյուզիվ կտրուած երկրի մնացած մասից եւ երեք կողմերից շրջապատուած Հայաստանով: Եթէ իրավիճակը ամուր ձեռքերում չլինէր, այստեղ կը տիրէին քառան ու անարխիան»:

Տնտեսութիւնը տարածաշրջանի ամենամեծ խնդիրն է: Ծայրը ծայրին հասցնող Նախիջեւանի բնակիչները յոյս ունեն, որ Ատրպէյճանի՝ Կասպից ծովի նաւթից գոյացող եկամուտների մի մասը իրենց բաժին կը հասնի, սակայն մինչեւ դա իրականութիւն դառնայ, նրանց



կեանքն ամենայն հաւանականութեամբ կը շարունակի դժուարութիւններով լի մնալ:

Տաքսիի վարորդը IWPR-ի թղթակցին տարաւ շուկայ, որտեղ գները շատ աւելի ցածր էին, քան Պաքուում: Օրինակ մի կիլոգրամ միսը Պաքուում արժէ 5 մանաթ, իսկ Նախիջեւանում՝ ընդամէնը 3: Միրգն ու բանջարեղէնը այստեղ մօտ 2-3 անգամ աւելի էժան են:

Նախիջեւանից աշխատուծի արտագաղթի մակարդակը շատ բարձր է: Ագաեւն ասում է, որ Շարուր շրջանի Եյջէ ու Գարգուն գիւղերը ամբողջովին դատարկուել են: Թուրքիայի սահմանին գտնուող այս գիւղերի բնակիչներն ընտանիքներով տեղափոխուել են թուրքական մօտակայ իգդիր քաղաքը:

Ընդդիմադիր «Ժողովրդավարական բարեփոխումների միութիւն» կուսակցութեան նախագահ Փարուին Ռաջաբովի խօսքերով, Նախիջեւանի բնակչութեան իրական թուրք մարդահամարի տուեալների ընդամէնը կէսն են կազմում:

«Ինքնավար հանրապետութիւնում գործազրկութեան պատճառով մնացել է ընդամէնը 150000 կամ 170 000 մարդ», - ասում է նա: «Մենք ուսումնասիրել ենք իրավիճակը եւ յայտնաբերել, որ միայն Շարուր շրջանից 50 000 բնակիչ է ապրում թուրքիայի իսթանպուլի եւ իգդիր քաղաքներում: Յիշէք, որ ըստ պաշտօնական վիճակագրութեան, [Շարուր] շրջանում 120 000 մարդ է բնակուում»:

Աղիլ Քահրամանովը՝ Նախի-

ջեւանի կառավարութեան մամուլի խօսնակը, պնդում է, որ իրավիճակը փոխում է, եւ նախկինում հեռացած մարդկանցից շատերը սկսում են այժմ վերադառնալ:

«Նոր աշխատատեղեր են ստեղծուում, ինչպէս նաեւ պայմաններ փոքր ձեռնարկատէրերի համար: Սա է Նախիջեւան մարդկանց վերադառնալու հիմնական պատճառը», - ասում է նա, աւելացնելով, որ վերջին երկու տարիների ընթացքում ստեղծուել են 4 խոշոր ձեռնարկութիւններ եւ մօտ 200 փոքր ընկերութիւններ:

Ծնունդով նախիջեւանցի Ֆազիլ Քազանֆարովուն՝ Ատրպէյճանի խորհրդարանի անդամը եւ Բոյուկ Քուրուլուս («Մեծ ստեղծագործութիւն») կուսակցութեան ղեկավարը, համոզուած է, որ այդ տարածաշրջանը տնտեսական ներուժ ունի:

«Անհար է չնկատել, որ ինքնավար հանրապետութեան սոցիալական պայմանները համեմատաբար բարելաւուել են», - ասում է նա: «Զի կարելի ժխտել, որ Նախիջեւանի մայրաքաղաքը մաքուր է եւ զեղեցիկ: Սակայն պէտք է ցաւով նշեմ, որ այս զեղեցկութիւնը մարդկանց հարստութեան զգացողութիւն չի տալիս»:

Նախիջեւանի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործօնը մեկուսացումն է: Տեղական իշխանութիւնները կը ցանկանային խրախուսել առողջապահական զբօսաշրջութիւնը, օգտագործելով իրենց առողջարանները, որոնք յայտնի

Շար.ք էջ 19

Advertisement for ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB. Features a belly dancer, a hookah, and text: 'FRIDAY NIGHTS AT ATLANTIS ARABIAN NIGHTS', 'authentic cuisine', 'full hookah bar', 'VIP membership', 'full cocktail bar', 'live belly dancing', 'live music and DJ'. Contact: 626.449.4599, 162 N. SIERRA MADRE BLVD. PASADENA, CA 91107.

ՏԱՐԵՂԱՐՁ

30,000 ՏՈԼԱՐ ԳՈՅԱՑԱԻ «ՄԱՍԻՍ»Ի 27ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻ ՇԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

Այս տարի եւս նորահաստատ աւանդութիւնը շարունակելով, Մ.Դ.Հ.Կ.ի օրկան «Մասիս» շաբաթաթերթը նշեց իր հիմնադրութեան 27րդ տարեդարձը:

Արդարեւ, Օգոստոս 5ին 2007, մտերմիկ շրջանակի մէջ եւ հոյլ մը բարեկամներու ներկայութեան տեղի ունեցաւ բացօդեայ շքեղ ընդունելութիւն մը շրջանիս Վարիչ Մարմնի անդամներէն՝ Տէր եւ Տիկ. ընկեր Կարօ եւ Անի Պէքարեանի կլէնտէյլի գեղատեսիլ բնակարանի պարտէզին մէջ:

Հարիւրէ աւելի հրաւիրեալներու մէջ կը նշմարուէին Թեմիս



Տօֆ. Արշակ Գազանեան

Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, նախկին առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Ս. Մարգիս Եկեղեցուց հովիւ Արժ. Տ. Նարեկ Ա. Բհնյ. Մատարեան, Կլէնտէյլի Բաղաբապետական Խորհուրդի անդամ՝ Տէր եւ Տիկ. Ֆրէնք Գինթերօ, Ս.Ը.Լ.Ա. համալսարանի հայագիտական ամպիոնի վարիչ՝ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեան, պատմաբան Փրոֆ. Գէորգ Խրլոբեան եւ իր տիկինը, Տօֆ. Մարգիս եւ Փրոֆ. Տիկին Սիլվա Գարայեանը, Մ.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի անդամներ, Լոս Անճելոս Հայ մամուլի եւ հեռուստաժամբուռ ներկայացուցիչներ, «Մասիս»ի աշխատակիցներ եւ բարեկամներ:

Ամառնային զով երեկոյին տիրապետեց շրջապատի հաճելի մթնոլորտը, իսկ նուագախումբը քաղցրահնչիւն եղանակներն ստեղծեցին սիրոյ եւ ուրախութեան մտերմիկ միջավայր մը, որ շարունակուեցաւ մինչեւ կէս գիշեր:

Կազմակերպիչ Յանձնախումբի անունով բարի գալուստի ջերմ խօսքերով հանդէս եկաւ «Մասիս»ի Տիկնանց Օժանդակ Մարմնի անդամներէն՝ Տիկին Կարինէ Տեփոյեան: Ապա հրաւիրեց «Մասիս»ի խմբագիրներէն՝ Յարութ Տէր Դաւիթեանը ստանձնելու օրուան հանդիսավարութիւնը:

Իր խօսքին մէջ Յարութ Տէր Դաւիթեան գնահատեց հայ մամուլի դերը եւ անոր վիճակուած ազգօգուտ առաքելութիւնը: Ան բացատրիկ արժեւորում տուաւ մամուլին, զայն նկատելով աւելի մնացուն ու վաւերական քան ինչ որ վիճակուած է հեռուստակայաններուն:

Այնուհետեւ խօսք առաւ «Մասիս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր՝ Տօֆ. Արշակ Գազանեան: Իր ելոյթին մէջ ան շեշտը դրաւ այն ճշմարիտ իրողութեան վրայ, թէ «Մասիս» կը մնայ ամուր հայրենասիրական դիրքերու վրայ: Իրա՛ւ հայրենասիրութիւնը


կանգնած կը մնայ նաեւ իրական քննադատութեան ենթահողի վրայ: Դրական քննադատութիւնը կառուցողական է:

Կըսուի դուրսը, «Մասիս» յաչս իշխանութիւններուն, մշտապէս կը մնայ ժխտական, քննադատական դիրքերու վրայ: Եթէ այդպէս է, ապա փնտրուածը Հայրենիքի յառաջդիմութիւնն է ժողովրդավարական առումով: Իշխանութիւնները պարտաւորուած են սրբազրել վարչական թերիները:

Իր ելոյթի աւարտին Տօֆ. Ա. Գազանեան ընդգծեց թէ «Մասիս» ունի ծրագիրներ՝ բարեկարգելու համար իր բովանդակութիւնը եւ արտաքին երեւոյթը: Այս կապակցութեամբ ան կ'ապաւինի հայ հասարակութեան նիւթական եւ բարոյական աջակցութեան:

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան խօսք առնելով նախ իր խորին երախտագիտութիւնն ու ուրախութիւնը յայտնեց Պէքարեան ամուլին, որ իրենց այս օճախը լայն կը բանան որպէս զի նուիրական ծրագրեր՝ ր այս պարագային՝ «Մասիս» շաբաթաթերթի ի նպաստ խրախճանք հանդիպումը յաջողութեամբ պսակուի:

«Պէտք է ասիկա արդիւնաւորել որպէս զի երկարաձգուի կեանքը մեր հայ մամուլին: Սրբազանն իր ուրախութիւնը յայտնեց որ ներկաները եկած են զօրակցելու եւ աջակցելու «Մասիս» շաբաթաթերթին, որ այս տարի կը սունախմբէ իր 27րդ տարեդարձը: 27



Հանդիսավար Յարութ Տէր Դաւիթեան

տարիներ շարունակաբար, յարատեւ աշխատանքով, խմբագիրներ եւ աջակիցներ, քով քովի գալով, ի զին ամէն զոհողութեան «Մասիս» շաբաթաթերթը դարձուցին մնացուն ներկայութիւն մը մեր ժողովուրդի այստեղ լոսանճելոսահայութեան համայնքի կեանքին մէջ:

Եզրակացնելով իր խօսքը Սրբազանը յորդորեց ներկաներուն ամրապնդել հիմքերը «Մասիս» շաբաթաթերթի, որպէս զի 27րդ տարեդարձն իմաստաւորուի ձեր քաջալերանքով եւ շարունակէ նաեւ լոյս բերել մեր ժողովուրդի կեանքին մէջ հայրենական նուիրագործումներ եւ յաջողութիւններ, որոնք պատիւ կը բերեն մեր երիտասարդութեան:

Բարի երթ «Մասիս»ին, որպէսզի մեր ժողովուրդի կեանքին մէջ դառնայ նոր սկիզբներու աղբիւր ներշնչող մարտահրաւէր մը: Աստուած թող օրհնէ ձեր այս բարի առաքելութիւնը: Ողջոյնի շնորհաւորական եւ



Արժ. Տ. Նարեկ Ա. Բհնյ. Մատարեան, ՄԴՀԿ ատենապետ՝ Գ. Մոլոյեան, Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Տիկին Մոլոյեան, տիկին Խրլոբեան եւ Փրոֆ. Գէորգ Խրլոբեան

գնահատական ջերմ խօսքերով հանդէս եկան նաեւ «Մասիս»- շաբաթաթերթի հիմնադիրներէն առաջին տարիներու խմբագիր Տօֆ. Յարութիւն Սաղրեան, «Արմնիրն

Վահէ Աջապահեան Մ.Դ.Հ.Կ.ի եւ անոր օրկանի որդեգրած գաղափարական ուղիի մասին հակիրճ ելոյթ մը ունենալէ ետք Յանձնախումբի անունով գեղեցիկ իւղանկար մը



Օրուան հիւրընկալ Տէր եւ Տիկին Կարօ եւ Անի Պէքարեաններ

Օպզըրվըր» թերթի խմբագիր Օշին Քէշիշեան, «Նոր Կեանք» շաբաթաթերթի խմբագիր Գրիգոր Շէնեան, «Քաջ Նազար» երգիծաթերթի խմբագիր՝ Յովհաննէս Պալայ-

նուիրեց օրուան հիւրընկալ Տէր եւ Տիկին Կարօ եւ Անի Պէքարեաններուն, առ ի երախտագիտութիւն այս երեկոյի յաջողութեան համար իրենց բերած մեծ նպաստին, թէ



Կազմակերպիչ Յանձնախումբի անդամները

եան, «Մասիս»ի աշխատակիցներուն անունով Թորգոմ Փոստաճեան, Ս.Ը.Լ.Ա.ի Հայագիտական ամպիոնի վարիչ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան, Փրոֆ. Գէորգ Խրլոբեան եւ Ֆրէնք Գինթերօ: «Մասիս» շաբաթաթերթի տնօրէն եւ կազմակերպիչ Յանձնախումբի ատենապետ՝

նուիրատուութեամբ եւ թէ իրենց գեղատեսիլ տունը տրամադրելով: «Սիրոյ Սեղան» ներու շուրջ ստեղծուած ուրախ ու խանդավառ մթնոլորտին իրենց կարեւոր բաժինը ունեցան նաեւ Չութակահար

Շաք. Էջ 19

Լուսանկարներ Գարին Պէքարեանի

ՍԴՎ 120-ԱՄԵԱԿ

ՍԻՏՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՆ Ա.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 120-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարումակուած էջ 1-էն

ղաքացիներուն կը խոստանար հաւասարութիւն, խօսքի ու խղճի ազատութիւն եւ կեանքի ու ինչքի ապահովութիւն: Իթիբհատականներու սահմանադրութենէն մինչեւ Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան Ռուսմանիոյ Քէօթեննէ քաղաքին մէջ գումարուած 7-րդ համագումարը, այդ կարճ հինգ տարիները ծանր պիտի կշռէին հայութեան ճակատագրին վրայ: Լուսամիտ դեկավար՝ Փարամագի խօսքերը շատ յստակ են. «Եթէ բոլոր հոսանքները քննանան, Հնչակեանութիւնը չի կրնար ուշադիր չհետեւիլ անոնց քայլերուն եւ պահանջել հարկին,



ՄԻՀԿ Կեդրոնի անդամ Ընկ. Գրիգոր Խոտանեան

չպայքարիլ հայութեան եւ թուրքիոյ այլազգի աշխատաւորութեան շահերուն համար»:

Ապա ընկ. Պոյաճեան կատարեց հետեւեալ եզրակացութիւնները.՝

Ա.- Այդ խառնակ եւ անպահով օրերուն, Ս.Դ.Հ.Կ.-ը որդեգրեց իրատես քաղաքականութիւն մը՝ իթիբհատէն ոչ միայն չխաբուելու, այլ գործակցելով ընդդիմադիր իթիբիաֆ կուսակցութեան հետ, պայքարեցաւ իթիբհատի դէմ: Այս իրատեսութիւնը, այդ օրերէն մինչեւ ներկայ ժամանակները տիրող դիմը կը հանդիսանայ Ս.Դ.Հ.Կ.-ի ազգային-քաղաքական ուղեգիծին:

Բ.-Ս.Դ.Հնչակեան Կուսակցութիւնը կոչ կ'ընէր բոլոր փոքրամասնութեանց գործակցութեան, իթիբհատի դէմ իր պայքարի գծով: Այս կը նշանակէր պայքար թէ ներքին եւ թէ արտաքին մարզերէն ներս, Հայ Դատի թղթածրարի էութեան եւ բացատրութեան միջազգային գետնի վրայ: Յստակ այս ուղեգիծը կը մնայ ի գործ մինչեւ այսօր, երբ մեր առջեւ դրուած է մեր սրբազան դատի հետապնդման համար անհրաժեշտ միասնականութիւնը հայ քաղաքական մտքի դեկավար շրջանակներէն ներս:

Գ.- Քսաններու մարտիրոսացման յարուցած սկզբունքները անբախտելիօրէն դրոշմուած են հայ ժողովուրդի հաւաքական գիտակցութեան մէջ եւ կը մնան առյաւէտ:

«Սուլթան Պայագիտի հրապարակին վրայ Քսան Հնչակեան հերոսներու նահատակումը՝ յանուն ազգային ազատագրութեան, կը հանդիսանայ այն հողը որուն վրայ հաստատուեցաւ հայու նորագոյն անկախութեան վերնաշէնքը: Սուլ-

թան Պայագիտի գոհաբերումը կը հանդիսանար հայ ժողովուրդի նոր պատմութեան հերոսական իրագործումներուն առաջինը, որուն պիտի գային աւելնալու Սարգարապատի եւ աւելի ուշ Արցախեան սիրագործութիւնները: Յեղափոխական հերոսական պայքարի դրօշը այս կերպով վեր պահուեցաւ Սփիւռքի, Հայաստանի եւ Ղարաբաղի հայութեան մօտ»,- եզրակացնելով ըսաւ ընկ. Պոյաճեան:

Ս.Դ.Հ.Կ. Աւստրալիոյ շրջանի անունով ելոյթ ունեցաւ Վարիչ Մարմինի ատենապետ ընկեր Վաչէ Թոփուզեան, որ յատկապէս ըսաւ,-

«Հայ ազգի առաջ կը ցցուին նորանոր խոչընդոտներ, վտանգներ եւ մարտահրաւէրներ: Օրըստօրէ հայ ազգը կը ձուլուի հսկայական օտարութեան մէջ, անտարբեր գտնուելով իր անցեալի, պատմութեան, մշակոյթի ու նոյնիսկ եկեղեցւոյ հանդէպ: Օրըստօրէ կը վտանգուի, Լեւոնային Ղարաբաղի քաղաքական իրավիճակը, վտանգելով Արցախի մեր քոչըրու ու եղբայրներու ապագան: «Շրջանի կայունացման ու ապահովութեան» լօզունգի տակ կամ աւելի ճիշդը՝ «քարիւղի ապահովման համար» հայ ժողովուրդին կ'առաջարկուի համաձայնագրեր ստորագրել, նոյնիսկ թուրքիոյ հետ, առանց Յեղասպանութեան ճանաչման նախապայմանի: Այսօր աւելի քան երբեք Հայ ազգը պէտք է ըլլայ միակամ: Միակամ ըլլայ Յեղասպանութեան ճանաչման, Ղարաբաղի հարցի արդարացի եւ խաղաղ լուծման եւ վերջապէս հայ ժողովուրդի ապագան երաշխաւորող ազատ ու անկախ Հայաստանի ամրապնդման գծով: Պէտք է վերանան անհատական եւ հատուածական նեղ հաշիւները, հայութիւնը՝ Սփիւռք թէ Հայրենիք, պէտք է պայքարի մէկ պատնէշի վրայ՝ միակամ»:

Ապա, ընկեր Թոփուզեան հանգամանօրէն ներկայացուց օրուայ



Օրուայ խառնակ Ընկ. Թորոս Պոյաճեան

գլխաւոր բանախօս, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկեր Գրիգոր Խոտանեանը:

Բանախօսը ընկերը իր ելոյթը սկսաւ գնահատանքի ու շնորհակալութեան խօսք ուղղելով Աւստրալիահայ գաղութի ներկայացուցիչներուն, որոնց միասնական աշխատանքի եւ միջկուսակցական համագործակցութեան շնորհիւ կարելի եղած էր ապահովել Հայկական Յեղասպանութեան ճանաչումը Նիւ Սաութ Օւէլզ Նահանգի խորհրդարանին կողմէ:

«Քսան կախաղաններու 92-րդ տարելիցի հանդիսութիւնները հայկական սփիւռքի տարածքին, այս տարի կը նշուին գուգահեռաբար Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան



Աւստրալիոյ Թեմի Առաջնորդ Աղան Արթեայիսկոպոս Պալիազեան

120-ամեակին: Աւստրալիահայ մեր համայնքը եւս այս օրերուն պատշաճ շուքով կը նշէ գոյգ թուականները, որոնք կարեւորագոյն իրադարձութիւններ եղած են ու կը մնան հայ ժողովուրդի պատմութեան մէջ»,- յայտարարեց ընկ. Խոտանեան եւ ապա ըսաւ.- «1887 թուականի Նոյեմբերին ծնունդ առաւ Հայ իրականութեան մէջ առաջին քաղաքական-յեղափոխական կազմակերպութիւնը՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը: Ժրնեւի մէջ, խումբ մը Կովկասահայ ուսանողներ, Աւետիս Նազարբէկեանի գլխաւորութեամբ, հիմը դրին շարժումի մը, որ կարողացաւ դիմաւալ տասնամեակներու փորձաքարին ու մնաց միշտ երիտասարդ ու կենսունակ, տարբեր ժամանակներու եւ պայմաններուն մէջ»,- յայտարարեց ընկ. Խոտանեան:

Խօսելով Հնչակեան քսան հերոսներու նահատակութեան մասին ան ըսաւ,- «Մենք երբեք չենք առանձնացներ Քսաններու նահատակութիւնը մեր միլիոնաւոր միւս նահատակներէն: Ամէն տարի նշելով անոնց տարելիցը, սերունդներու մօտ մենք կ'արթնցնենք գիտակցութիւնը՝ մեր ժողովուրդի վիճակուած ճակատագրին ու այդ ողբերգութեան առաջը առնելու համար պայքարողներուն այս հոյլին: Քսաններու մեծութիւնը կը կայանայ այն բանի մէջ, որ անոնք ոչ միայն կանխատեսեցին Հայոց Յեղասպանութիւնը, այլ, փորձեցին կանխել գայն»:

«120 տարի առաջ Հնչակեան Կուսակցութեան հրապարակ գալով Հայ ժողովուրդի կեանքէն ներս կը յայտնուէր քաղաքական լուրջ ծրագրով, իրապէս համագային մակարդակով եւ զանգուածային անդամակցութեամբ կուսակցութիւն մը, որ իր քաղաքական եւ յեղափոխական գործունէութեամբ բախտորոշ դեր պիտի ստանձնէր իր պատկանած ժողովուրդի կեանքէն ներս: Դեր մը գորտակաւին կը շարունակէ խաղալ իր հիմնադրութենէն ահաւասիկ 120 տարիներ ետք: Հայ ժողովուրդի ազատագրութեան ճամբուն վրայ, Հնչակեան Կուսակցութեան մղած պայքարները, կազմակերպած ցոյցերը եւ ինքնապաշտպանութեան

կռիւները ծանօթ են բոլորին: Հայ ժողովուրդի պատմութեան էջերը լեցուն են հերոսական այնպիսի դրուագներով, որոնք պատիւ կը բերեն մեր բոլորին: Իր պատմութեան ընթացքին Հնչակեան Կուսակցութիւնը առաջնորդուեցաւ Հայ ժողովուրդի ընդհանրական շահերով ու իր մասնակցութիւնը բերաւ համագային բոլոր ճակատագրական պայքարներուն»:

Խօսելով Հայաստանի ներկայ իրավիճակի մասին Կեդրոնի ներկայացուցիչը ըսաւ,- «Անկախութենէն 16 տարիներ ետք, մեր ժողովուրդի իղձերն ու անկախութիւնները կը մնան անկատար: Ժողովուրդի մօտ կը տիրէ ընդհանուր դժգոհութիւն, որ արդարացի է բազմաթիւ պատճառներով:

Խոցելի եւ քննադատելի կը գտնենք իշխանութիւններու որդեգրած ուղեգիծը, որ յատկանշուած է մենատիրական գործելաձևով, փոսխտով կաշառակերութեամբ, ընկերային արդարութեան եւ քաղաքական ազատութիւններու բացակայութեամբ եւ ոտնակոխումներով: Ցաւալի է, որ այսօր Հայաստանի մէջ բացակայ է իսկական ժողովրդավարութիւնը: Ընտրական բոլոր գործընթացները, ըլլան անոնք նախագահական թէ խորհրդարանական ընտրութիւններ եւ կամ Սահմանադրական հանրաքուէ, տեղի կ'ունենան համատարած խախտումներով ու կեղծիքներով:



ՄԻՀԿ Աւստրալիոյ Վարիչ Մարմնի ատենապետ Ընկ. Վաչէ Թոփուզեան

րով եւ այս բոլորը միջազգային դիտորդներու եւ իրաւապաշտպան կազմակերպութիւններու վկայութեամբ: Դատական համակարգը, որ կոչուած է գործելու ազատ, պարզ ժողովուրդի համար ըլլալու պաշտպան եւ ապաստան, այդ համակարգը կը գտնուի գործադիր իշխանութիւններու ամբողջական վերահսկողութեան տակ, կատարելով անոր հրամանները:

«Հոն ուր չկայ արդարադատութիւն, չկայ ազատութիւն, չկայ տնտեսական հաւասարութիւն եւ մանաւանդ չկայ հաւատք երկրի ու անոր ապագային նկատմամբ: Այս իսկ պատճառաւ կը շարունակուի արտագաղթը Հայրենիքէն ու մեր ժողովուրդի գաւակները կու գան լեցնելու Մոսկուայի, Եւրոպայի եւ Լոս Անձելէսի փողոցները»:

«Այս բոլորը նկատի առած մեր կուսակցութիւնը կանգնելով ժողովուրդի կողքին կը գտնուի իշխանութիւններու վարած ներ-

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

**Ն.Բ.Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՊԱՏՈՒԷ
ԴՈԿՏ. ԶԱԻՆ ՄԱՐԻԼԵԱՆԸ**

Օգտուելով Դոկտ. Զաին Մարրլեանի ներկայությունն էլ լուս Անճելլայի մէջ, Ն.Բ.Ը. Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովը, մասնակցութեամբ Միացեալ Նահանգներու Հայ Աւետարանական Ընկերակցութեան, ինչպէս նաեւ՝ Հայ Աւետարանական Քոլէճի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Ափի Շրջանաւարտից Միութեան, կազմակերպած է մեծարման հանդիսութիւն մը անոր ընծայած ծառայութեանց համար, իբրեւ Ն.Բ.Ը. Միութեան, Հայկական համայնքին եւ եկեղեցւոյ նուիրեալ կամաւոր, կրթական մշակ, պատմաբան, հեղինակ, եւ յատկապէս՝ անոր քառասնամեայ պաշտօնավարութեան համար իբրեւ տնօրէն Հայ Աւետարանական Քոլէճին Պէչրուսթի մէջ, Լիբանան: Զեռնարկը պիտի վայելէ հովանաւորութիւնը Ն.Բ.Ը. Միութեան նախագահ Պրն. Պերճ Սեդրակեանի, ու տեղի պիտի ունենայ յաւաքիկայ Օգոստոս 17, 2007ին, Ուրբաթ եկերկոյեան ժամը 8-ին, Բարեգործականի Ալեք Մանուկեան Կեդրոնի հանդիսասրահին մէջ, Pasadena, 2495 E. Mountain St., CA 91104, հեռ. (626) 794-7942:

Հաւաքուցիին հանդիսավարն է Տոքթ. Գէորգ Քէշիշեան: Օրուան գլխաւոր խօսողներն են Պրն. Փանոս Թիթիգեան, Տիկ. Ժանէթ Քասունի եւ Տոքթ. Վիգէն Ահարոնեան եւ Փրոֆ. Ռիչըրտ Յովաննէսեան: Պիտի գործադրուի գեղարուեստական յատուկ յայտագիր, մասնակցութեամբ՝ Սալբի Բրընեան Քառեակի, երգչուհի Անահիտ Ներսէսեանի, դաշնակի ընկերակցութեամբ՝ Լեոն Աբրահամեանի եւ տաղանդաւոր ասմունքող՝ Թագուհի Արզումանեանի: Պաշտօնական ծրագրին պիտի յաջորդէ պատշաճ հիւրասիրութիւն: Այս հանդիսութեան սիրով հրաւիրուած է հանրութիւնը:

Դոկտ. Զ. Մարրլեան ծնած է 1938-ին, Պէչրուսթ: Շրջանաւարտ է Հայ Աւետարանական Քոլէճին 1955-ին: Տեղւոյն Ամերիկեան Համալսարանէն 1959-ին ստացած է Պակաւոր Արուեստից վկայական Եւրոպական Պատմութեան մէջ, իսկ 1963-ին Մագիստրոս Արուեստից վկայականը Միջին Արեւելեան Պատմութեան մէջ: 2004-ին իրեն շնորհուած է Երեւանի Գիտութիւններու Ակադեմիային կողմէ Դոկտորայի պատուակալ տիտղոսը, գնահատելով անոր հայագիտական ու մանկավարժական ծառայութիւններն ու ներդրումները:

Դոկտ. Մարրլեան Հայ Աւետարանական Քոլէճի ուսուցչական կազմին մէկ անդամը դարձաւ 1960ին, իսկ 1967ին նշանակուեցաւ տնօրէն կրթական այս հաստատութեան, ուր կը շարունակէ պաշտօնավարել մինչեւ այսօր: Լիբանանեան քաղաքացիական պատերազմի 15 տարիներուն, անիկա չլքեց իր պաշտօնը, որպէսզի դպրոցը շարունակէ գործել կարելիութեանց բնականոն պայմաններու տակ:

Հայ Աւետ. եկեղեցիներու Կեդր. Յանձնաժողովը 1986ին գինք պարգևատրեց Դոկտ. Զաին Մարրլեանին իր անձնական և ընտանեկան կողմէ անձնակազմը հարձակուած պիտի չալիտի հանդիսանայ Հայ Աւետարանական Քոլէճին 1955-ին: Տեղւոյն Ամերիկեան Համալսարանէն 1959-ին ստացած է Պակաւոր Արուեստից վկայական Եւրոպական Պատմութեան մէջ, իսկ 1963-ին Մագիստրոս Արուեստից վկայականը Միջին Արեւելեան Պատմութեան մէջ: 2004-ին իրեն շնորհուած է Երեւանի Գիտութիւններու Ակադեմիային կողմէ Դոկտորայի պատուակալ տիտղոսը, գնահատելով անոր հայագիտական ու մանկավարժական ծառայութիւններն ու ներդրումները:

Հայ Աւետ. եկեղեցիներու Կեդր. Յանձնաժողովը 1986ին գինք պարգևատրեց Դոկտ. Զաին Մարրլեանին իր անձնական և ընտանեկան կողմէ անձնակազմը հարձակուած պիտի չալիտի հանդիսանայ Հայ Աւետարանական Քոլէճին 1955-ին: Տեղւոյն Ամերիկեան Համալսարանէն 1959-ին ստացած է Պակաւոր Արուեստից վկայական Եւրոպական Պատմութեան մէջ, իսկ 1963-ին Մագիստրոս Արուեստից վկայականը Միջին Արեւելեան Պատմութեան մէջ: 2004-ին իրեն շնորհուած է Երեւանի Գիտութիւններու Ակադեմիային կողմէ Դոկտորայի պատուակալ տիտղոսը, գնահատելով անոր հայագիտական ու մանկավարժական ծառայութիւններն ու ներդրումները:

Դոկտ. Զ. Մարրլեան ծնած է 1938-ին, Պէչրուսթ: Շրջանաւարտ է Հայ Աւետարանական Քոլէճին 1955-ին: Տեղւոյն Ամերիկեան Համալսարանէն 1959-ին ստացած է Պակաւոր Արուեստից վկայական Եւրոպական Պատմութեան մէջ, իսկ 1963-ին Մագիստրոս Արուեստից վկայականը Միջին Արեւելեան Պատմութեան մէջ: 2004-ին իրեն շնորհուած է Երեւանի Գիտութիւններու Ակադեմիային կողմէ Դոկտորայի պատուակալ տիտղոսը, գնահատելով անոր հայագիտական ու մանկավարժական ծառայութիւններն ու ներդրումները:

Շար.ը էջ 19

**ՎԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ
ՓԱՌԱՏՈՆ ՍԵՊՏԵՄԲԵՐ 23, 2007**

Յաջորդական 9-րդ տարուան համար, Հայաստանի Անկախութեան օրուան Փառատօնը հպարտանքի ու վայելքի օր մը պիտի հանդիսանայ բոլոր անոնց համար, որոնք Կիրակի, Սեպտեմբեր 23, 2007-ին պիտի գտնուին Կլէնտէյլի Վերտուկօ Բարքին մէջ:

Արդարեւ, 10 տարիներ առաջ, Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը որոշեց կազմակերպել Հայաստանի Անկախութեան օրուայ փառատօն մը, արժանի հանդիսաւորութեամբ եւ ժողովրդային մասնակցութեամբ նշելու այս կարեւոր տօնը: Եւ ահա տարուէ տարի այդ աւանդութիւնը կը շարունակուի, ստանալով յաւելեալ փայլք եւ բաշխելով յաւելեալ վայելք:

Այդ օր, ներկաները պիտի վայելեն հայկական նուազ, երգ ու պար, արուեստ ու մշակոյթ, նոր ու հին բարքեր եւ հաճելի ժամանց բոլոր տարիքներու համար: Բնականաբար համադամ ճաշեր ու քաղձրեղէններ աւելի պիտի անուշցնեն վայելքը: Ասոնց կողքին, հայ վարպետներու ձեռարուեստի նմուշներու ցուցադրութիւնն ու

վաճառքը, որ մեծ ընդունելութիւն գտաւ անցեալ տարի, աւելի եւս ճոխացած ու ընդարձակուած պիտի ըլլայ այս տարի: Քաջակերելով հայրենի վարպետներու ձեռակերտը երոզ այդ յուշանուէրներու վաճառքը, մենք նպատած կ'ըլլանք ներկայի տնտեսական դժուարին վիճակի տակ անոնց համար արժանապատիւ կեանքի պայմաններ ստեղծելու նպատակին:

Ինչպէս անցեալ տարիներուն, այս անգամ ալ ծանօթ եւ սիրուած երգիչներու յոյլ մը պիտի խանդավառէ մթնոլորտը, Կլէնտէյլի Վերտուկօ Բարքը դարձնելով ուրախութեան եւ հոգեկան վայելքի ուղիսի մը:

Եկէք, վայելեցէք եւ սոնական օր մը անցուցէք Կիրակի, Սեպտեմբեր 23, 2007-ին առաւօտեան ժամը 11-էն մինչեւ երեկոյեան 7-ը: Մուտքը ազատ է բոլոր հասակի ու տարիքի սոնակատարողներու համար:

Արդարեւ, այս յայտարարութեամբ, Հ.Ք. վարժարանը կու գայ իր այս ուրախութեան մասնակից դարձնելու Քալիֆորնիոյ Հայ համայնքը, նաեւ շնորհակալութիւնը յայտնելու բոլոր նուիրեալ անձերուն, որոնք իրենց աջակցութիւնը չզլացան այս յաջողութիւնը իրականացնելու:

ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ԸԱՅ ԲՈՅՐԵՐՈՒ ՎԱՐժԱՐԱՆԻ ԸԱՄԱԿԱՐԳԻՉԻ ԴԱՍԸՆԹԱՅԸ



Հայ Քոլեջերու վարժարանի տնօրէնութիւնը 2006-2007 տարեշրջանի աւարտին կազմակերպեց համակարգիչի յատուկ, խտացուած դասընթացք՝ վարժարանիս ուսուցչական կազմին եւ պաշտօնէութեան համար:

Սոյն դասընթացքին նպատակն էր յառաջիկայ դպրոցական տարեշրջանին կրթական դրութեան մէջ ներմուծել համակարգիչը՝ օգտագործելով արդիական միջոցներ, ուսումնառութիւնը նոր սերունդին մօտ աւելի հետաքրքրական եւ գրաւիչ դարձնելու մտահոգութեամբ:

Դասընթացքը կը հովանաւորէր վարժարանիս տնօրէնութիւնը, գործակցութեամբ «Կիլիկիա» նորահաստատ քոլէճի տնօրէնութեան: Դասընթացքի տեւողութիւնն էր Յունիս 25-29, օրական 6 ժամ. խտացուած եւ օգտաշատ այս դասախօսութիւնները տրուեցան համակարգիչի դասախօս, «Կիլիկիա» քոլէճի տնօրէն Օննիկ Պայրամեանի կողմէ:

Ան հաճելի եւ ընկերային մթնոլորտի մէջ, մեծ համբերութեամբ, գիտելիքները մանրամասնելով եւ սպառիչ բացատրութիւն տալով, փորձեց մատչելի դարձնել համակարգիչի այն ծրագիրները, որոնք պիտի օգնեն ուսուցիչին՝ դասաւանդած նիւթը աւելի գիւրութեամբ բացատրելու եւ հաճելի

դարձնելու համար աշակերտներուն: Իւրաքանչիւր դասախօսութեան յաջողութեան գործնական դասեր, որոնք աւելի եւս ամրապնդեցին համակարգչային գիտելիքները «ուսուցիչ-աշակերտներու» մտքերուն մէջ:

Հպարտութեամբ նշենք, որ դասընթացքի հետեւող ուսուցիչները «Կիլիկիա» քոլէճի առաջին հունձքն էին, անոնք ստացան դասընթացքի յայտագրին համապատասխան վկայագրեր, որոնք պիտի արժեւորուին վարժարանիս տնօրէնութեան կողմէ, որպէս քոլէճի վարկանիշ:

Այս առթիւ, Հայ քոլեջերու վարժարանի ուսուցչական կազմը խորին շնորհակալութիւն կը յայտնէ տնօրէնութեան, որ իր հեռատես որոշումով այս պատեհութիւնը ստեղծեց՝ վերատրակելու ուսուցիչները համակարգչային գիտելիքներով, նաեւ շնորհակալութիւն «Կիլիկիա» քոլէճի տնօրէն Օննիկ Պայրամեանին, որ 5 օրերու տեւողութեան դասատուներու յատուկ համակարգչային անհրաժեշտ գիտելիքներ մատակարարեց փորձառու դասատուի ճարտարութեամբ:

Կը մաղթենք, որ նմանօրինակ դասախօսութիւններ յաճախակի ըլլան, մեկնելով անոնց ընձեռած մեծ ծառայութենէն, յատկապէս գիտութեան եւ համակարգչային գիտելիքներու այս դարուն:

ՄԱՐՏԱԽԱՂ» Կարիկ Պատմաճեան

Յապարկամով ստացուած «Մարտախաղ» բանաստեղծութիւններու հատորը լոյս տեսած է Երեւան, 2005ին:

Յուրի Խաչատրեանի կողմէ կազմուած, անոր առաջաբանին եւ վերջաբանի լոյս տեսած ներկայ քերթողագիրքը տպագրուած է Վալենտին Բազիրեանցի հովանաւորութեամբ:

403 էջերէ կը բաղկանայ այս պատկառելի գեղատիպ հատորը: Ան ունի հարուստ բովանդակութիւն: Յուրի Խաչատրեան իր «Տա-

Բաց աստի, հատորին մէջ տեղ գտած են Պատմաճեանի յօդուածները, թարգմանութիւնները, էսսեները, որոնք կ'ընդգրկեն ժամանակակից անգլիական պոէզիաները, ժամանակակից արաբական պոէզիան, Հայաստանի մինչեւ 30 տարեկաններու բանաստեղծութիւնները, գրոյցները, պահպանուած նամակներ, Պատմաճեանի ստացած նամակները եւ վերջին խօսք՝ Յուրի Խաչատրեանէն:

Նմուշներ կարիկ Պատմաճեանի Քերթողագիրքէն



րածութեան Յաղթահարումը մինչեւ խաղի վերջը» յառաջաբանի էջերուն մէջ կը ներկայացնէ, կը վերլուծէ եւ կ'եզրահանգէ կարիկ Պատմաճեանի գրական, գեղարուեստական, գլխաւոր եւ անձնական՝ այլապէս արկածախնդրական կեանքը, որ իր աւարտին կը հասնի անորոշ այլապէս տխուր պարագաներու տակ:

Հատորի բանաստեղծական միջնաէջը 165 էջերը յատկացուած են կարիկ Պատմաճեանի գեր-իրապաշտական ստեղծագործութիւններուն, որոնք գլուխներու բաժնուած են յատուկ խորագիրներու տակ: Ինչպէս «Լուսատիտիկ Արեւի մէջ», «Շթաքարեր», «Բաղմնափոխի», «Մահուան եղանակներ», որոնց տակ ամփոփուած են Պատմաճեանի քերթուածները:

Հատորը ունի իր թարգմանական բաժինը, որը նուիրուած է ամերիկահայ անգլիագիր բանաստեղծներուն, ինչպէս Լեւոն Սրապեան-Չերըլտ, Խաչիկ Մինասեան, Հայկ Խաչատրեան, Վահան Գուլյումեան, Մէլլի Մաթոսեան-Մորսպիթօ, Տայանա Տէր Յովհաննէսեան, Տէյվիտ Խտրրեան եւ այլն:

ԳԱՐՈՒՆ

Հաւաքուել է գեղեցկութիւնը աչքերիս մէջ: Ձերմութեան մութ երակներ են ելնում քո հողի տակ թաղուած տուֆից, նաեւ լաւաշ են բուրում երակները եւ հատու մատներ: Վերադառնում են դէպի քո սկիզբը:

ԱՍՏՈ

Խեղդում է քո փոշին. աչքեր է կուրացնում: Որքա՞ն հեշտ է յաղթանակելը արեւի ջերմութեամբ, որքա՞ն հեշտ է տառապեալներից համբերութիւն խնդրելը: Ամառդ չես սիրում:

ԱՃՈՒՆ

Շուրջս ոչ ոք չկայ: Անգամ շատ են այս մերկ ծառերի հետ մեռող հատ ու կենտ բարի տերեւները, սրտի պէս միտքն էլ դատարկոււմ. անհնարին է վերադառնալ, անցնել այդքան տարածութեան եւ այդքան թախծի միջով: Կանգ է առնում նաեւ աշնան գարկերակը. Դու սիրոյ չափ գեղեցիկ ես:

ՁՍԵՆ

Մութ ես աւելի, քան բոլոր սերերն իմ անցեալի: Փողոցի սուված շները մրսում են, բայց նաեւ լուռ են. ոչխարներն սպանդանոցներում մորթում են ոչխարի պէս: Բայց քեզ չես հասկանում այսօր. քո աչքերը բաց են, մերկ են եւ պաղ, քո աչքերը դառնում են դատարկ ստամոքսներ. ես քեզ չես հասկանում, դու չես կարող ուտել ինձ, չես կարող. ես քո լեզուն եմ:

ՄԱՍԻՍ ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year) * \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name:-----
Address:-----
City:----- State:----- Zip Code:-----
Country:-----
Tel:----- Fax:-----

ՇՓՈԹ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ՄԵՂԱԴՈՐՆԵՐԸ ԿԸ ՆԱՐՍԱՆԱՆ ԵՒ ԱՆՄԵՂՆԵՐԸ ԿՂՂՔԱՏԱՆԱՆ

ՎԱՐԴԱՆ Ա.ՔԶՆՅ. ՏԻՒԼ ԿԵՐԵԱՆ

Այսօր, ստուգապես կրնանք ըսել, թե հայրենիքի սէրը՝ գրեթե ամէն հայու սրտին մէջ որոշ նուազում մը կը բացայայտէ:

Ազգայնօրէն տեղեկանա՞ծ հայր՝ եսականօրէն կը թեքի իր ինքնութիւնը եւ ինչ որ աղերս ունի իր կեանքին, իր շահերուն եւ վայելքներուն հետ, իր ցանկութեան թիրախ կը դարձնէ:

Ազգային եւ տոհմային նուիրագործուած բոլոր արժէքները կը համարէ նախապաշարուած ու ժամանակավրէպ:

Կանգնուածնայ իր հայու ինքնասիրութիւնը, կը դադարի մայրենի լեզուն խօսելէ, կը հրաժարի տոհմանունէն, կը մեկուսանայ ազգային ոգեւորութիւններէ ու եկեղեցի յաճախելէ եւ օտար շրջանակներու մէջ կը շեշտէ իր ներկայութիւնը, նիւթական օժանդակութիւններով եւ պատուակալ պաշտօններու կատարումով:

Այսպիսի ժխտական ու եսական նահանջ մը ազգային պարտականութիւններէ, կը խոչտանգէ իր մէջ հայու խղճմանը եւ կը դարձնէ իր անձը անսիրելի ու վանողական յաջըս հասարակութեան:

Դարը արժեքաւոր է, աշխարհի վերջին մարդը կը լսէ ու կը տեսնէ իր գործած նախնիները:

Բարին լուսկեաց է, ու ցաւալի է, որ իր կատարած սիրագործութիւնները չեն հասնիր ու լսուիր լսողութիւններէ:

Ողջամտութեան ձայները տկար են եւ ի գորու չեն խեղդելու խռովարարներու յարուցած որոտալի աղմուկը:

Ժամանակը՝ իր յարափոփոխ ճողովոյթով՝ միշտ անգութ ու ապերախ եղած է հայ ժողովուրդի իրաւունքներուն եւ պահանջներուն հանդէպ եւ խրախուսած է մարդկային հայակեր ճիւղները, որ կեղեքեն ու հարստահարեն հայութիւնը եւ գրկեն ազգային խողովութեան եւ ապահովութեան բարիքներէն:

Երկրի վրայ, կա՞ց գորութիւն մը, որ կարենայ կասեցնել ամբարիշտներուն ասպատակութիւնները, շղթայազերծուած անգոր ժողովուրդներու կեանքին դէմ:

Թէեւ՝ մարդկային քառասցած հասարակութեան մէջ նուազ չէ թիւը Աւետարանի սիրոյ պատերազմներով պայքարողներու, բայց մեղքին բռնակալին գահը կը մնայ անասան եւ կարելի չէ գահընկեց ընել զայն իր ժայռանիստ պատուանդանէն:

Իրապէս, ափսոսելի պիտի ըլլար ժողովուրդի մը ճակատագիրը, եթէ օրհասական պահերուն անանուն հերոսներ եւ ազատամարտիկներ չյարնէին ժողովուրդի ծոցէն եւ չազատագրէին հայութիւնը ազգաշինջ գուրումներէ:

Ո՞վ պիտի փրկէր հայուն վտանգուած գոյութիւնը յաւերժական տատակոտ ճանապարհին վրայ, եթէ այդ գարունամեայ կտրիճները չմաքառէին հոգեկան բարձրագոյն պատնէշներու վրայ եւ չանմահանային:

Այս մռայլ ու մթին ժամանակներուն, աշխարհը կը շնչէ աղիտաբեր անակնկալներու երկունքով: Աշխարհը ենթակայ է շարունակական յարափոփոխութիւններու: Ամէն բոսի արտաւոյց նորութիւնները եւ նորոյթները կ'ալկալեցնեն մարդկութեան դիմագիծը ու չեն կրնար

զատորոշել այրը եւ կինը իրենց բնական կերպարներուն մէջ:

Թէ հասկանար, թէ ո՞վ է իրաւը եւ ո՞վ է գնահատողը եւ ո՞վ է աշխարհականը, անստուգելի շփոթութիւն մը մտած է հասարակական բարեքերու մէջ եւ ծանօթ ու անծանօթ մարդիկը դարձուցած է անճանաչելի ու անվստահելի:

Առաքինութեան ճառագայթները փոխարինուած են մոլորութիւններու թանձր ստուերներով: Ամէն բան, որ գեղեցիկ է՝ սղեղ կը տեսնենք եւ ամէն ինչ որ բնական է՝ արուեստական կը թուի մեզի:

Մարմինը եւ հոգին, ամէն մարդու մէջ անխտիր կը գործեն ոխակալ ոտիներու մոլորեցրով: Առաջին յայրատ ցանկութիւնները կը գոհացուին եւ երկրորդին արդար պահանջները կը ժխտուին:

Պախարակելի ու ամօթալի տեղափոխութիւն մը կատարուած է մարդոց եւ իրերու միջեւ:

Սուտը փոխարինուած է ճշմարտութեամբ, սէրը ատելութեամբ, բարոյականը անհատարմութեամբ եւ հաւատքը անաստուածութեամբ:

Այս նեխած կլիմային վարակումէն անաղարտ կը մնան սակաւթիւ բարեպաշտներ միայն, որ կրնանք զանոնք հռչակել Քրիստոսի հարազատ աշակերտները:

Անվստահութիւնը՝ այն աստիճան շեշտուած է մարդոց յարաբերութիւններուն միջեւ, որ գաղտնիք

մը չեն կրնար վստահիլ պարկեշտ կարծուած՝ ոչ մէկ բարեկամի: Որ կողմը դառնաս եւ որու հետ խօսիս կամ պիտի շողոքորթէ եւ կամ պիտի փորձէ իր ակնկալութիւնը բացայայտելու:

Վախերը եւ վարանումները մարդուն առօրեան դարձուցած են խոտվայոյց եւ մղձաւանջներն ու անձկութիւնները համագիշերային տառապանք:

Մարդուն եւ հասարակութեան բարոյական կորսնցուցած է իր հակաշիւրը եւ երկուքն ալ կը բարացուցեն բնութիւններու համանոյնութիւն մը:

Միայն երկնային միջամտութիւն մը կրնայ որակաւորել անոնց կեանքը:

* * *

Սանձարձակութեան եւ շփոթութեան մէջ ամէն տեսակ ապօրինութիւն թոյլատրելի եւ հնարաւոր է:

Նիւթին աստուածացումը եւ անիրաւ շահերու զինուորութիւնը ստեղծած են այնպիսի խոլարշաւ մրցակցութիւն հողին նայելով կը տեսնեն իր մարմնոյ մահը ու աչքերը երկինք յարելով՝ կը տեսնեն իր կեանքին փառաւորումը եւ յաւերժութիւնը:

Աստուծոյ հոգիին հետ համաձուլելով՝ կ'ըլլաս անհամեմատելի մեծութիւն մը: Ալ՝ չես զգար միմիակ եւ յուսալքուած, աղքատ եւ կարօտ, հիւանդ ու տկար: Ան՝ բու մէջդ է եւ կը խօսի քեզի հետ խրախուսական յորդորանքներով: Կը գօտեպնդէ հոգիդ այնպիսի գորութեամբ, որ կարծր փորձութիւններու դիմաց դառնաս անառիկ բերդ մը:

Նիւթապաշտութիւնը նորագոյն դարերու մեղքը չէ: Նախաքրիստոնէական դարաշրջաններուն ալ դրամին կուռքը պաշտուած է եւ գերած է մարդուն կապարացած զգայարանքները:

* * *

Անցեալի երեւելի գորավար Նելսոնը ապշեցուցիչ յաղթանակներ շահեցաւ ծովերու վրայ՝ ճակատամարտերու ընթացքին: Անդրիմադրելի դժուարութիւններ եւ վարակիչ հիւանդութիւններ յաղթահարեց Հնդկաստանի մէջ: Ընդհարումներու ընթացքին կորսնցուց իր մէկ աչքը եւ թեւը: Չը գինաթափուցաւ ոչ մէկ ձախողութեան դիմաց եւ անվատ ու աննահանջ շարունակեց իր գրոհումները, որոյդելով կուրծքին տարածքը շքանշաններով:

Բայց ափսոս, որ ծովերու այս անպարտելի հերոսը հիացաւ իր սիրային կիրքերէն գրաւած՝ ամուսնացած կնոջ մը հետ ունեցած իր անպարկեշտ յարաբերութիւններով:

Ծովերու վրայ մեծ յաղթութիւններով դիւցազնացաւ եւ ցամաքի վրայ անպատուեց իր փառքը՝ բարոյական տկարութիւններով:

Մեղքը մեծ եղեր է կամ փոքր, ցաւ է տանջանք է, դժբախտութիւն է: Կը յարուցանէ հոգիին մէջ ամպրոպային փոթորիկներ եւ կ'անդամալուծէ մարդուն կեանքը մինչեւ մահ: Կրնա՞ց մեղքէն յարածեծուած խռոված հոգի մը ուրախ ըլլալ:

Ազատ եւ հաճոյք եւ ուրախութիւն վայելել, միայն՝ մի թողուր որ փորձութիւնը մօտենայ ու դպչի

Շաբ.ը էջ 19



WWW.GILIGIACOLLEGE.COM

(818) 956 9600

CAMPUS
2361 FLORENCITA DRIVE MONTROSE, CA 91020

OFFICE
1650 FLOWER STREET, GLENDALE, CA 91201

<p>Managerial Courses</p> <ol style="list-style-type: none"> 1- Office Administrator 2- Computerized Accounting 3- Administrative Assistant 4- ESL 5- Computerized Taxing 6- Medical Billing 	<p>Design Courses</p> <ol style="list-style-type: none"> 7- Web-Site Design 8- Video & DVD Editing 9- 3-D Modeling 10- 3-D Animation 11- Graphic Design 12- Photo Editing 13- AutoCAD 	<p>Technical Courses</p> <ol style="list-style-type: none"> 14- PC Systems Technician 15- Network Administrator 16- Desktop Publishing 17- Visual Basic programmer
---	---	---

Our Dedication Is

To educate key job skills for a better workforce performance.

To give you access to the opportunities and tools of the modern employment markets.

To support the workforce development with a sustainable education.

To improve your job performance by developing your skills.

We offer efficient course clusters for an intensive and competent training.

We Provide State Funded Program For Employers and Employees (ETP)

We Accept Workers Compensation Training Vouchers

ԱՇՆԱՆԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ՍԵՊՏԵՄԲԵՐ 10-ԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԳՂԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնատր Անցեալ
Proud Past



Լուսաշող Ապագայ
Exciting Future



UNDER THE PATRONAGE OF
AGBU PRESIDENT BERGE SETRAKIAN
THE AGBU SOUTHERN CALIFORNIA
DISTRICT COMMITTEE

WITH THE PARTICIPATION OF THE AMAA
AND THE ARMENIAN EVANGELICAL COLLEGE
WEST COAST ALUMNI ASSOCIATION

Presents



A TRIBUTE TO DR. ZAVEN MESSERLIAN

*In Recognition to His Services to the AGBU,
the Armenian Community and Church,
as a Dedicated Volunteer, Teacher, Historian & Author,
and His 40th Anniversary as
Principal of the Armenian Evangelical College in Beirut.*

Master of Ceremonies: DR. KEVORK KESHISHIAN
Speakers: PANOS TITIZIAN, JEANETTE KASSOUNY
and DR. VICKEN AHARONIAN

ARTISTIC PROGRAM
FOLLOWED BY A RECEPTION

FRIDAY, AUGUST 17, 2007, 8PM

AGBU ALEX MANOOGIAN CENTER

2495 E. MOUNTAIN ST., PASADENA, CA 91104 (626) 794-7942

THE PUBLIC IS INVITED

**Let us teach Armenian
to your children!**

*Our children must
read and write what they speak.*

AGBU ARMENIAN SATURDAY SCHOOL OF ORANGE COUNTY

at Saint Mary Armenian Church
148 E. 22ND STREET, COSTA MESA

Registration begins

Saturday, September 8, 2007 – 10am

- Eastern & Western Armenian dialects will be taught in separate classes
- Small Class Size
- Qualified Teachers
- Introduction to Armenian History & Traditions
- Snacks
- Loving Atmosphere

For more information, please call
Krikor at 714-898-9053

*****New Teachers Wanted*****

AGBU SOUTHERN CALIFORNIA
DISTRICT COMMITTEE

Proudly Presents the 4th Annual

AGBU SOCIETY DINNER

Honoring

VAHE KARAPETIAN

Saturday, October 13, 2007 – 7pm

HUNTINGTON RITZ CARLTON HOTEL

DONATION \$1,000 PER COUPLE

**KHACHIK ABRAHAMYAN ASHOT AVAGYAN GAREGIN DAVTYAN MARINE DILANYAN HERMINE DEMIRTSHYAN
GAGIK GHAZANCHYAN ALBERT HAKOBYAN MAYIS MKHITARYAN LILIT SOGHOMONYAN**

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION, SOUTHERN CALIFORNIA DISTRICT COMMITTEE PRESENTS

9 CONTEMPORARY ARTISTS FROM ARMENIA

AN EXTRAORDINARY ART EXHIBITION

FRIDAY, SEPTEMBER 28, 2007, 7-11PM
SEPTEMBER 29 & 30, 3-10PM

AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN ST., PASADENA, CA 91104
TEL 626.794.7942



ԴԵՊՈՒ ՅՈՒՌՆՈՒԽԻ

Շարունակում էք 13-էն

քու հողին, լեռներին, քու դաշտերին ու այգիներին: Քու երկիրը հիմա արեւակենտրոն համաստեղութիւն է, մայր ոստանը հայոց արեւն է, նրա շուրջը փռուել են տասը մարզ - մոլորակները, մի մոլորակ Արցախն էլ բերել են, եւ դեռ ինչքան մոլորակներ պիտի գան ազատ կեանքի պար բռնելու միասին, եւ ճախրեն դէպի յաւերժութիւն:

Խճուղիի աջին մշուշած ցուցանակ է՝ Շուռնուխի Գիւղ, դեռ այն ժամանակների ցուցանակն է: Բարձրանում ենք հայացած գիւղ: Հիմա 47 թուականի ու յետագայ տարիների Շուռնուխին չէ, այն գնացել է դէպի անտառ, տարածուել նախկին ծխախոտի դաշտում: Մօտ յիսուն օձախների ծխաններից ծուխ է բարձրանում: Պարտէզներն ու բանջարանոցներն են գրկել տները: Առաջնորդում են մեզ գիւղի դպրոց, չէ այս այն դպրոցը չէ որտեղ ժամանակին դասաւանդել էի հայ ու ատրպէջճանցի մանչերին: Տնօրէնը՝ Մուրթուզ եւ ուսմասվարը ազերի էին, ես ու գործարանի պարտկոմի քարտուղար Արամ Սեւիկեանի կին Ռոզան դասաւանդում էինք Անգլերէն ու Ռուսերէն: Ուսմասվարը մի օր հարցրեց, թէ արդեօք արտասահմանում էլ ասում են որ երկիրը կլոր է, ահա քեզ թուրքի իմաստունութիւն...: Պարտադրել էին բարեկամութիւն հաստատելու, ապա թէ ոչ ինչու այդպէս թշնամութիւն պողթկաց: Եղբայրս գիւղի մի հասակակիցի հետ, մինչեւ այդ տարիները, բարեկամական յարաբերութիւններ էր պահպանում: Նոյնիսկ Երեւան տեղափոխուելուց յետոյ էլ Մուրթուզը այցելում էր ինձ: Իսկ շրջակայ բազմաթիւ ազերի գիւղերի բնակիչները մեծ

յարգանք էին տածում հօրս նկատմամբ, որին անուանում էին «Պաշը պըրգ տոթթոր» այսինքն՝ «Գլխաբաց բժիշկ»: Ինչ որ էլ լինի, հիմակուայ բորբոքում թշնամութիւնն էլ մի բան չէ, դրացիներ դատապարտում են միասին ապրելու:

Դպրոցի տնօրէնի ընդունարանում ենք, երկու նուիրեալ այր ու կին ուսուցիչներ, առանձին ու միացուած դասարաններում շուրջ 50 մանչերի սրտերին հայրենի ու այլ իմաստունների մտքերի լոյսն են կաթում: Հայոց մշակութի, գրականութեան հմուտ գիտակ է կին տնօրէնը, գուարթ են որ այս լեռների մանչերի հոգիներին հայերէն գիր են հոսեցնում: Միւս կողմը շէնքի փլատակներն են, նայեցի հեռուից, մօտ չգնացի, թող յուշերս մնային կենդանի:

Կանգնեցի գիւղը եզերող ինքնաշարժի խճուղիի կիսաւտոբանոսում, 1947 թուականի Օգոստոսին այստեղ էր կառանել բեռնատարը, որ իթափքին էր Արմենակը իր ութ հոգիանոց ընտանիքի հետ, Շուռնուխի Փայտամշակման Գործարանի բանուորական աւանն էր: Գնում են կեանքիս անցեալի քառուղիներով, Շուռնուխի յուշերի ջահերն են վառում, հայրենաբնակ տան սեմին են, կարծես հայրս վազում է դէպի ինձ: Հիմա չկան այն օրերի տաղաւարները, նրանց քարէ հիմքերի վրայ նոր տներ են կառուցել: Չկա շուռնուջը այն օրերի, չկա մարդկանց խիղը, սառել է աւանը: Լուռ կանգնում են այն տաղաւարի առաջ, որ մեր տունն էր եղել, որտեղ մօրս բարի ժպտի, հօրաքոյրիս գորովանքի, հօրս առնական հոգատարութեան, քոյրերիս ու եղբայրներիս քրքիջների լոյսերն են վառուել, լուռ կանգնում են բոլորին, գրկում

նրանց, սեղմում սրտիս, որտեղ հոսում է սիրոյ գգուանքի կարօտ:

Երկար ճանապարհի ու այդ ընթացքի ամառային տաքերից հիւանդացել էր փոքր եղբայրս: Ժամանակաց քիչ անց հանգեց նրա փոքրիկ ճրագը: Գործարանի դեկավարութիւնը մեզ էր ուղարկել, մասնաբաժնից առանձին, զանազան մթերքներ: Յուղարկաւորութեան օրը ցաւակցութեան էին եկել գործարանի աշխատողներ, որոնց հիւրասիրել էինք մեզ հետ բերած սուրճ ու քաղցրաւուկներ միայն: Չգիտէինք տեղական սովորոյթը թէ ուղարկած մթերքներով հոգեճաշ պիտի մատուցէինք, հայրս իրենց ներողամտութիւնն էր հայցել:

Մեզ են ընդառաջ գալիս նախկին բանաւանի նոր բնակիչները: Պատմում են, որ շատ հեռու աշխարհից այստեղ են եկել, արբենալու հայրենի երկրի իմ առաջին հանգրուանի հողի կարօտի կանչով, Արմենակի ընտանիքի կեանքի մի պահի չխամրող յուշերով, երկար զրուցեցինք, տխրեցի, խնդացինք, ուրախացանք:

Մտնում են տաղաւարի դիմացի հողամաս, որտեղ հօրս հետ հող մշակեցինք, ի զարմանա տեղաբնակների բերքով լի բանջարանոց արբեցինք: Ականջիս են հնչում Լեզնոնական կամաւոր Արմենակի գիշերուայ այն կրակահերթը, որ արձակել էի բանջարանոց մտած արջի վրայ: Կանգնում են այն տաղաւարի առաջ, որտեղ գործարանի գրասենեակն էր, կարծես մտնում են ներս, Արցախեցի տնօրէն Եղիշէ Բալայեանն է «Քէ մատաղ» կանչելով դիմաւորում ինձ Գլխաւոր հաշուապահ Բաղդասարեան Արտեմն է, որը անչափ հոգատար վերաբերմունք էր տածել մեր հանդէպ, մեզի անծանօթ, զարմանք յարուցող փայտէ շրջանակով, մետաղեայ թելերին ազուցուած փայտէ հատիկներով հաշ-

ուիչները գրասեղաններին հաշուապահներ՝ Սաշիկը, Չապէլը, Մարիա Վիկտորովնան ժպտում են ինձ: Ընտանիքից հինգը աշխատում էինք գործարանում, ես երեք տեղ դպրոց, գործարան եւ գրասենեակ, զարմանում էին: Նոյն տաղաւարում ուսւ աշխատողներն էին գլխաւոր ճարտարագէտ կարայեւակին ընտանիքով, բարի կիսելով իր հացթուխ տիկնոջ հետ, ճարտարագէտ Պանթելէեւը ընտանիքով:

Հին արահետով գնում են դէպի գործարանատեղ: Ոլորանից դէպի ներքեւ մուտքի փայտեայ դարպասն էր, սկզբնական շրջանին այդտեղ էր հրացանակիր Արմենակը պահակութիւն անում, ուրախ էր որ դարձեալ գէնք էր վերցրել: Գործարանի հին տեղում միայն մի յենասին էր մնացել, լուռ ունկնդրեցի սրտցների ձայները:

Փլուել էր բանուորական ակումբը, լուռ կանգնեցի նրա մօտ, կարծես նորէն ունկնդրում էի մեզ դիմաւորելու եկած Գուսան Աշոտի Չանգեզուրի լեռների երգերը, ինչ լա է ետ բերել յուշ դարձած կեանքի հեքիաթը՝ հրճուել, թախծել թէ լացել:

Ուրախ էինք, մանաւանդ հօրաքոյրս, որ Մուսա Լեռան նման Չանգեզուրի այս լեռներ էինք եկել, որտեղ նրանց լեռնական հոգիների կարօտն էր պոթկում: Շատ անուշ լեռնական մարդիկ էին, պահակային ծառայութեան պետ բարձրահասակ պարծենկոտ «Արշակ Տալին» որ «Պարտիզան» (ապստամբ) էր եղել, նկարուել «Չանգեզուր» շարժապատկերում, որսորդ Տաթեւի Արտաշը, իր «սուտիկ որսկանի» որսորդական հնարովի պատմութիւններով, հապա «Դեպոտատ» Հայկանուշը, առաջաւորի կրծքանշանով: Ինչպէս իմ հայրենի գիւղի, այնպէս էլ այս աւանի երազային լուստտ յուշերը իմ կեանքի տարեգրութեան անուշ անուրջներ են:



MIDDLE EAST RESTAURANT

الشرق مطعم

MEDITERRANEAN LEBANESE FOOD



Wahib

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



FAMILY ENTERTAINMENT BANQUET HALL EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT INTERNATIONAL ~ ARABIC CALL FOR RESERVATION

BELLY~DANCING



MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA. TEL 626-281-1006 626-587-1048 FAX 626-281-3641

ՄԱՐԶԱԿԱՆ

ՇԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 16-րդ հանգրվանի մրցումներուն արդիւնքները

- Փիւնիկ - Բանանց 1-2
- Միկա - Շիրակ 1-1
- Կիլիկիա - Արարատ 1-2
- Ուլիս - Գանձասար 0-1

	Խաղ	Ցուցիչ	Հաւ.	Պարտ.	Կոլ	Միակողմ
1. Արարատ	16	11	2	3	30-11	35
2. Փիւնիկ	15	11	1	3	34-12	34
3. Միկա	16	8	4	4	28-16	28
4. Բանանց	16	8	4	4	26-18	28
5. Գանձասար	16	6	4	3	13-12	22
6. Շիրակ	15	5	5	5	15-14	20
7. Ուլիս	16	1	2	13	6-36	5
8. Կիլիկիա	16	1	2	13	5-38	5

ՈՒԵՖԱ-Ի ԳԱԻԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹԻՒՆՈՒՄ «ՄԻԿԱՆ» ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԻ ՊԱՅՔԱՐԸ, ԻՍԿ «ԲԱՆԱՆՑԸ»՝ ՈՉ

Օգոստոսի 2-ին Երեւանում ՈՒԵՖԱ-ի գաւաթի խաղարկութեան որակաւորման 1-ին փուլի պատասխան խաղն անցկացրին Երեւանի «Միկան» եւ Բուդապեշտի ՄՏԿ-ն (Հունգարիա): 1:0 հաշուով յաղթեց «Միկան»: Միակ գոլի հեղինակ դարձաւ Արտիոմ Աղամեանը:

Երկու հանդիպումների արդիւնքով Երեւանի «Միկան» առաջին անգամ յաղթահարեց ՈՒԵՖԱ-ի գաւաթի խաղարկութեան որակաւորման առաջին փուլի արգելքը եւ անցաւ 2-րդ փուլ, որտեղ նրա մրցակիցը յայտնի կը դառնայ վիճակահանութեամբ:

Օգոստոսի 2-ին նոյն ծրագրով Բեռնում (Շուեյցարիա) Երեւանի «Բանանցը» պատասխան հանդիպումն անցկացրեց «Յանգ Բոյզ»-ի հետ եւ պարտուելով 0:4 հաշուով դուրս մնաց պայքարից:

ՈՒԵՖԱ-ի գաւաթի խաղարկութեան 2-րդ փուլում «Միկան» կը մրցի Սլովակիայի Պետրժեկա քաղաքի «Արտմեդիա» թիմի հետ: Առաջին հանդիպումը տեղի կ'ունենայ Երեւանում Օգոստոսի 16-ին, իսկ պատասխան հանդիպումը՝ Օգոստոսի 30-ին Բրատիսլաւայում:

«ՓԻՒՆԻԿ» ԶԿԱՐՈՂԱՅԱԻ ՅԱՂՁԱՐԿՈՒԹԵԱՆ ՈՒԵՖԱ-Ի ԶԵՄՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ ԽԱՂԱՐԿՈՒԹԵԱՆ ՈՐԱԿԱՒՈՐՄԱՆ 2-ՐԴ ՓՈՒԼԻ ԱՐԳԵԼԸ

Օգոստոսի 8-ին Ուկրաինայի Դոնեցկ քաղաքում ՈՒԵՖԱ-ի չեմպիոնների լիգայի խաղարկութեան որակաւորման 2-րդ փուլի պատասխան խաղում տեղի «Շախտիորը» 2:1 հաշուով առաւելութեան հասաւ Երեւանի «Փիւնիկի» նկատմամբ: Քանի որ Երեւանում նոյնպէս «Փիւնիկը» պարտութիւն էր կրել՝ 2:0 հաշուով, ապա երկու հանդիպումների արդիւնքով 2-րդ փուլ անցաւ «Շախտիորը»:

ՐԸ ԹԵՆԻՍԻ ԸԱԻԱՔԱԿԱՆԸ ԶԲԱՂԵՑՐԵՑ 2-ՐԴ ՏԵՂԸ ԴԵԻՍԻ ԳԱԻԱԹԻ 4-ՐԴ ԵՐԱՎՓՐԻԿԵԱՆ ԳՕՏՈՒ ՄՐՅԱՇԱՐՈՒՄ

Հայաստանի թենիսի հաւաքականը զբաղեցրեց 2-րդ տեղը Երեւանում աւարտուած Դեւիսի գաւաթի 4-րդ եւրասիական գոտու մրցաշարում եւ իրաւունք նուաճեց եկող մրցաշրջանում հանդէս գալ մրցաշարի 3-րդ գոտում:

Առաջին փուլում Հայաստանի հաւաքականը հանդիպեց Ռուսաստանի թենիսիստների հետ: Մենախաղերում Յարութիւն Սոֆեանը յաղթեց Էրիկ Հազենիմանին (6:0, 6:3), իսկ Հայկ Զոհրանեանը պարտուեց Զին Կլաուդէ Գասիկուին (3:6, 2:6): Զուգախաղերում յաղթեց Սոֆեան-Զոհրանեան երկեակը: Մոնտենեգրոյի հաւաքականը առաւելութեան հասաւ Բոտսուանայի թիմի նկատմամբ՝ մենախաղերում եւ զուգախաղերում:

2-րդ փուլում Անդորայի թիմի հետ հանդիպման ժամանակ մենախաղում Հայաստանի թենիսիստներից Աշոտ Գեորգեանը պարտուեց, իսկ Յարութիւն Սոֆեանը յաղթանակ տարաւ: Զուգախաղում Հայկ Զոհրանեան-Յարութիւն Սոֆեան երկեակը 5:7, 7:5, 8:6 հաշուով յաղթեց անդորացիներին:

Վերջին փուլում Հայաստանի թիմը 0:3 հաշուով զիջեց մրցաշարի յաղթող Մոնտենեգրոյի թիմին եւ 3 միաւորով՝ 3 յաղթանակ 4 խաղերում, դարձաւ երկրորդը:

Վերջին փուլի միւս խաղում Անդորայի հաւաքականը 3:0 հաշուով յաղթեց Ռուսաստանի թիմին եւ 2 միաւորով զբաղեցրեց 3-րդ տեղը: Զորորդ տեղում է Բոթսուանայի թիմը՝ 1 միաւոր, 5-րդ՝ Ռուսանդան՝ 0 միաւոր:

Դեւիսի գաւաթի 3-րդ գոտու ուղեգրեր նուաճեցին այս մրցաշարի 2 լաւագոյն թիմերը:

ԺՈՐԱ ՅՈՎԸԱՆՆԻՍԵԱՆԸ ԹՐԴ ԱՆԳԱՍ ՆՈՒԱՃԵՑ ԱՋԱՏ ԸՄԲԵԱՄԱՐՏԻ ԱՃԻԱՐԿԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ԶԵՄՈՒՆԻ ԿՈՉՈՒՄԸ

Ստամբուլում անցկացուեց ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի վետերանների առաջնութիւնը, որին մասնակցեցին 57 երկրների 300-ից աւելի մարզիկներ: Հայաստանը ներկայացրեցին 3 ըմբշներ: Ժորա Յովհաննիսեանը (63 կգ, Վանաձոր, 46-50 տարի քային խումբ) անցկացրեց յաղթական 4 գոտեմարտ, գրաւեց 1-ին տեղը եւ արժանացաւ ոսկէ մեդալի: Սա ժ. Յովհաննիսեանի վետերանների աշխարհի առաջնութիւններում նուաճած 6-րդ ոսկէ պարգեւն է: Նոյն տարիքային խումբում եւ քաջային կարգում Արմէն Շերոյեանը (Արարատ) գրաւեց 2-րդ տեղը: Հայաստանի 3-րդ ներկայացուցիչը՝ Լեւոն Աւագեանը (85 կգ, Վանաձոր), անմասն մնաց խաղարկուած պարգեւներից:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ԱՆԳՎԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆուտբոլի առաջնութեան 1-րդ հանգրվանի մրցումներուն արդիւնքները

Սանտըրլենդ - Թոթեմհամ	1-0
Պոլքոմ - Նիւքասլ	1-3
Ուեսթ Յամ - Մանչեսթըր Սիթի	0-2
Միտլըզպորո - Պլեյքլըն	1-2
Էվըրթըն - Ուիկան Աթլ.	2-1
Տերպի Բաուլմօր - Փորթսմութ	2-2
Ասթոն Վիլլա - Լիվըրպոլ	1-2
Արսենալ - Ֆուլհամ	2-1
Չելսի - Պրոմիսիտ	3-2
Մանչեսթըր Եուն. - Ռիսինգ	0-0



Առաջատար խումբերու դասաւորումը

Նիւքասլ	1	1	0	0	3-1	3
Մանչեսթըր Սիթի	1	1	0	0	2-0	3
Չելսի	1	1	0	0	3-2	3
Լիվըրպոլ	1	1	0	0	2-1	3
Արսենալ	1	1	0	0	2-1	3
Պլեյքլըն	1	1	0	0	2-1	3
Էվըրթըն	1	1	0	0	2-1	3

ԳԵՐՄԱՆԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆուտբոլի առաջնութեան 1-րդ հանգրվանի մրցումներուն արդիւնքները

Շթութկարթ - Շալքե-04	2-2
Յանովըր-96 - Յանպուրկ	0-1
Վոլսպուրկ - Արմ. Պիւլքֆելտ	1-3
Պայերն Միւնիխ - Ռոսթոք	3-0
Պ. Լիվըրքուզըն - Քոթայիս	0-0
Այնթ. Ֆրանքֆորթ - Յերթա Պերլին	1-0
ՎՖԼ Պոխում - Վարտըր Պրէյմըն	2-2
Նիւրնբերգ - Քարլսրուհէ	0-2
Տորթնուտ - Տուիզպուրկ	1-3



Առաջատար խումբերու դասաւորումը

Պայերն Միւնիխ	1	1	0	0	3-0	3
Քարլսրուհէ	1	1	0	0	2-0	3
Տուիզպուրկ	1	1	0	0	3-1	3
Այնթ. Ֆրանքֆորթ	1	1	0	0	1-0	3
Յանպուրկ	1	1	0	0	1-0	3
Քոթայիս	1	0	1	0	0-0	1

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆուտբոլի առաջնութեան 2-րդ հանգրվանի մրցումներուն արդիւնքները

Թուլուզ - Լիոն	1-0
Նանսի - Քան	1-0
Նիս - Սթրասպուրկ	1-0
Սէնթ Էթիէն - Վալանսիէ	3-1
Լորիան - Մոնպօ	2-1
Մարսէլ - Րըն	0-0
Սոչո - Լը Մանս	1-3
Օքսէռ - Պորտո	0-2
Մէթց - Լիլ	1-2
Լանս - Փարիզ Սէն ժերմէն	0-0



Առաջատար խումբերու դասաւորումը

Պորտո	2	2	0	0	3-0	6
Նանսի	2	2	0	0	3-0	6
Լը Մանս	2	2	0	0	4-1	6
Սէնթ Էթիէն	2	1	1	0	5-2	4
Լիլ	2	1	1	0	2-1	4
Լորիան	2	1	1	0	2-1	4
Լիոն	2	1	0	0	2-1	3

Հ.Մ.Մ. ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ուրախութեամբ կու գանք ձեզի տեղեկացնելու թէ ամէն Շաբաթ ժամը 3:00էն մինչեւ 5:00 տեղի պիտի ունենայ սկաուտական դասըթացքներ: Անոնք որ կը փափաքին մաս կազմել սկաուտական կամ պասքեթպոլի խումբերուն կրնան դիմել Գաբրիէլ Միխարեանի (626) 376-2658 եւ կամ Հ.Մ.Մ.ի Կեդրոնը՝ (626) 398-0506, 1060 N. Allen Ave. Pasadena
Մանրամասնութիւններուն համար կրնաք հետեւիլ »Մասիս« շաբաթաթերթին:

Հ.Մ.Մ.Ի ԱՄԱՌՆԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը կազմակերպած է իր տարեկան ամառնային բանակումը, որ տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 1,2,3 Labor Day weekend-ին: Անոնք որոնք կ'ուզեն իրենց տեղերը ապահովել կրնան հեռաձայնել Օժիվիկին հետեւեալ թիւով՝ (626) 429-8366:

ՍԻՏՆԻ ՍԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՆ Ա.Գ. ԶՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 120-ԱՄԵԱԿԻ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակում է 7-էն

քին ու արտաքին քաղաքականության ընդդիմադիր դիրքերուն վրայ: Մեկնելով այս մտահոգություններին կու գանք յայտարարելու որ, Հնչակեան կուսակցությունը կը մնայ հետամուտ Հայաստանի մէջ ժողովրդավարական, դեմոկրատական կարգերու հաստատման: Մենք, մեր բոլոր կարելիութիւններն ու միջազգային-քաղաքական կապերը պիտի օգտագործենք այդ նպատակին հասնելու համար:»,- յայտարարեց Գրիգոր խոտանեան:

Իր ելույթի ընթացքին բանախօսը ներկայացուց նաև Հնչակեան կուսակցության տեսակետները Հայ-թուրք յարաբերություններում, դարաբաղեան հարցի, Ջալալ Բաքաթյանի կեանքի մեր ժողովուրդը չուզող այլ հարցերու շուրջ: Ներկաներու մօտ մեծ խանդավառություն յառաջացուց «120 Տարի Ի Սպաս Ժողովուրդի» տեսանկյունը, որ պատրաստուած էր ընկ. Մանուկ Տէմիրճեանի կողմէ: Գեղարուեստական յայտագրին

իրենց մասնակցությունը բերին Ալվարո Աբոյեան՝ ջուրի վրայ նուազելով Արամ խաչատուրեանի գործերին և Լարա Ձիլինկիրեան, որ ասմունքեց Սեդի Գոչունեանի «Փառք Մշտաքոյ»-ն:

Փակման խօսք կատարեց Գերաշնորհ Տէր Ադամ Արքեպիսկոպոս Պալիոզեան: Սրբազան Հայրը օրուայ խորհուրդին ու յայտնեց թէ Հնչակեան կուսակցությունը 120-ամեայ երիտասարդ մըն է, որ ծնած օրէն հանդիսացած է իր ժողովուրդի պաշտպանը:

Շաբաթ, Օգոստոս 4-ին տեղի ունեցաւ 120-ամեակի ճաշկերոյթ, որուն եւս ներկայ եղան արտասահմանէն ժամանած հիւրերը, իսկ սրահը լեցուցած էին Հնչակեան կուսակցութեան համակիրներն ու ընկերները:

Ճաշկերոյթի ընթացքին եւս եղան ելույթներ, նուիրուած Մայր կուսակցութեան տարեդարձին: Ապա, ընկ. Գրիգոր խոտանեան, շրջապատուած Աւստրալիոյ վարչի Մարմինի անդամներով, կտրեց 120-ամեակի կարկանդակը:

ՆԱԽԻՉԵԻԱՆ. ՄԵՎ ԱՅԼ ԱՏՐՊԵՅՃԱՆ

Շարունակում է 5-էն

էին դեռևս խորհրդային տարիներին: Սակայն երբեմնի յայտնի Բատաբատ առողջարանի բժիշկ Սուլէյման Մամեդովն ասում է. «Բատաբատի, Բաղամլիի և Վանանդի մեր առողջարաններում զբոսաշրջութեան զարգացման համար բաւարար ռեսուրսներ կան: Սակայն այս շրջանները գտնուած են Հայաստանի սահմանին մօտ, և նոյնիսկ Ատրպէյճանի այլ վայրերին այստեղ մարդիկ չեն գալիս, ուր մնաց նախկին խորհրդային Միութիւնից կամ այլ երկրներից գան»:

Քաղաքական կեանքը Նախիջևանում բաւական պասիւ է: Ատրպէյճանի այլ մասերում տարածուած ընդդիմադիր և անկախ թերթերը չեն վաճառուած քաղաքի կրպակներում: Փոխարէնը դրանք ձեռքից ձեռք են փոխանցուած: Եթէ թերթերը Նախիջևանի ղեկավարներին բացասաբար ներկայացնող որեւէ յօդուած են պարունակում, իշխանութիւնները փորձում են առգրաւել դրանք՝ մինչև անգամ դրանց տարածաշրջան հասնելը: Քննադատական բովանդակությունները թերթ վաճառող անձր կարող է 15 օրով կալանուել: «Ինչ վերաբերում է ընդդի-

մութեանը, ապա այն գոյություն ունի միայն ֆորմալ կերպով՝ միջազգային կազմակերպություններին գոհացնելու համար», - ասում է Մուսաւաթական կուսակցության ներկայացուցիչ Ելչին Գադիմովը: «Ընդդիմադիր կուսակցություններին չեն թոյլատրուած ոչ միայն բողոքել, այլևս հրապարակայնօրէն հանգիստ պայմաններում գործողութիւն իրականացնել: Նրանք ստիպուած են իրենց կոնֆերանսներն անցկացնել ոստիկանութեան և հետախուզութեան ծառայությունների ներկայացուցիչների հսկողութեամբ»:

Տեղացիներից մէկը՝ Իլհամ Նարիմանովուն, վերջերս ստիպուած էր ոստիկանութիւնում բացատրագիր գրել միայն այն պատճառով, որ ընդդիմադիր թերթի թղթակիցը նրա տուն էր այցելել:

IWPR-ի թղթակիցը զգացել է անկախ լրագրողների հանդէպ Նախիջևանում առկայ պաշտօնական վերաբերմունքը. նրան տուգանել են 2 մանաթի չափով՝ ախյայտօրէն անմեղ հանգամանքի՝ Պաքու մեկնելիս ձայնագրիչ ունենալու համար: Տուգանքի հիմքերի վերաբերեալ որեւէ բացատրություն չի հնչել:

Հեղինակ՝ Մաբուհի Մամադադի, Նախիջևան

30,000 ՏՈՒՐ ԳՈՅԱՅԱԲ «ՄԱՍԻՍ»Ի 27ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻ ԶԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԵՆ

Շարունակում է 6-էն

Աստուեր Աստուերեանն ու իրեն նուազակցող Արամ Լեփեճեանը, որոնք ժամեր շարունակ հայկական, ռուսական և միջազգային երանակներու կատարումը մեծ հաճոյք պատճառելով մոռցնել տուին ժամերու սահանքը:

Այս առթիւ տեղի ունեցաւ հանգանականութիւն: Արդարեւ

ներկաներէն և բացականերէն փոխանցուած նուէրներու գումարը հասաւ շուրջ 30 հազար տուրքի:

Ուշ գիշերին ներկաները բաժնուեցան գեղատեսիլ վաչքէն, շնորհակալութիւններ յայտնելով Պէքարեան գոյգին և կազմակերպիչ յանձնախումբի անդամներուն, իրենց հետ տանելով յիշատակելի երեկոյի մը լաւագոյն տպաւորությունները:

Յ.Բ.Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՊԱՏՈՒԷ ԴՈԿՏ. ԶԱԲԵՆ ՄԱՐՐԵԱՆԸ

Շարունակում է 8-էն

Լատրեց ոսկի մետալով իր քառասնամեայ կրթական ծառայութեանց համար: Անիկա Հայոց պատմութեան այցելու դասախօս էր միաժամանակ, Պէյրութի Աղջկանց Ամերիկեան Քոլէճին մէջ 1967էն 1971:

Զաւէն Մարրեան Բարեգործականի անդամ է իր ծնունդի օրէն ի վեր, ու գործօն մասնակցութիւն բերած է Հ.Բ.Ը. Միութեան և հայկական համայնքի գործունէութեանց՝ երիտասարդ տարիքին: Եղած է Բարեգործականի և Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան գործօն անդամներէն 1957էն սկսեալ, ու վարած է ատենապետութիւնը Հայ Համալսարանական Ուսանողաց Միութեան 1958էն 1961, նաև 1973էն սկսեալ 9 տարի մաս կազմած է Հ.Ե.Ը.-ի Կեդրոնական վարչութեան: 1966էն 1970 մաս կազմած է Միութեան վեթերաններու Համախմբումին կողմէ՝ հրատարակուած Յուշամատեն հատորի խմբագրական կազմին:

1964ին կ'ընտրուի Թէքէեան Մշակութային Միութեան Լիբանանի Կեդր. Մարմնի ատենապետ մէկ շրջանի համար: Աւելի քան 10 տարիներ կը ծառայէ Հայ Աւետարանական Քոլէճի Շրջանաւարտից Միութեան իբրև ատենապետ և ատենապետ: Անիկա 1991էն ի վեր ատենապետ է Հայ Աւետարանական Կրթական Համադրիչ Յանձնախումբին: 2004էն ի վեր կը վարէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ռիչլըստ ու Թինս Բարոյան Հիմնադրամի պարգևատրման Յանձնախումբի ատենապետութիւնը: Գնահատելով կրթական բնագաւառէն ներս անոր նուիրեալ ծառայություններն եւս, Հ.Բ.Ը. Միութիւնը 2003ին հաստատած է Զաւէն Մարրեան Կրթաթոշակը Հայ Աւետ. Քոլէճէն ներս արժանաւոր սաներու տրամադրուելու համար:

Զաւէն Մարրեանի հեղինակութեամբ հրատարակուած գործերէն, յիշատակենք «Հայկական Հարցի Մասին», (1978), որ արժանացած է Հայկաշէն Ուզունեան Մրցանակին, «Երեք Դաշնագիրներ» (Աղեքսանդրապոլ, Մոսկուա, Կարա՝ 1920-21, 1979), «Մկրտիչ Մարրեանի Ազգային, Քաղաքական Գործունէութիւնը» (1981), «Կանխամտածեալ Բնոյթը Հայերու վրայ Գործադրուած Յեղապանութեան» (2001), որ արժանա-

ցած է Գրիգոր Մելիքիանցի Գրական Մրցանակին, լոյս ընծայուած՝ Կիլիկիոյ Կաթողիկոսարանին կողմէ: Դոկտ. Զաւէն Մարրեան հրատարակած է նաև երկու այլ հատորներ՝ վարդան Մաթոսեանի «Երկրագունդին Հարաւային Կողմը՝ Հայերը Լատին Ամերիկայի Մէջ, Սկիզբէն Մինչև 1950», և Յակոբ Չոլաքեանի «Ռուժ Չորի Հայերը՝ Անտիոքի Մօտ»: 1963ին պատրաստած իր անտիպ թէքէն՝ «Հայկական Ներկայացուցչութիւնը Լիբանանեան խորհրդարանին Մէջ» յաճախակի մէջբերումներ կատարուած են բազմաթիւ տպագրություններու մէջ: Անիկա իր մասնակցութիւնը բերած է նաև 1980ին Լոնտոնի մէջ հրատարակուած Քրիստոֆըր Ուոքըրի «Survival of a Nation» հատորի կենսագրական բաժնին (էջ 379-428):

Դոկտ. Մարրեան ստորագրած է հայերէն և անգլերէն լեզուներով Հայկազեան Քոլէճի հայագիտական հանդէսին մէջ բազմաթիւ պատմական յօդուածներ, որոնցմէ 23ը հրատարակուած են առանձին գրքիկներով ինչպէս նաև «Հասկ»ի հայագիտական տարեգիրքին, «Երուանդ Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկ»ի տարեգիրքին, Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.ի «Դափնեպակ»ին ու «Խօսնակ» պաշտօնաթերթին, «Զարթօնք» օրաթերթին, «Արարատ», «Ազդակ-Երկիր», «Նոր Օր»ին և այլ հրատարակություններու մէջ: Մաս կազմած է «Շիրակ» գրական ամսագրի խմբագրական կազմին (1965-85) և «Հայագիտական Ուսմանց» (1972-73): Ներկայիս մաս կը կազմայ Պէյրութի «Կամար» գրական պարբերաթերթի խմբագրական կազմին:

1973ին շնորհիւ իր ջանքերուն, Միացեալ Ազգերու կազմակերպութեան կողմէ պարտրաստուած տեղեկագիր մը (30-րդ պարբերութիւն) կը յիշատակէր Հայկական Յեղասպանութիւնը 20-րդ դարուն գործադրուած իբրև առաջին նախընթաց դէպք: Դոկտ. Զաւէն Մարրեանի կենսագրությունը կը գտնենք Գառնիկ Ստեփանեանի հրատարակած «Կենսագրական Բառարան»ի (Երեւան 1990), «Հայկական Հարցի Հանրագիտարան»ին (Երեւան 1996), «Հայկական Համառօտ Հանրագիտարան»ի (1999), ինչպէս նաև միջազգային այլ հրատարակություններու մէջ:

ՄԵՂԱԽՈՐՆԵՐԸ ԿԸ ԶԱՐՍԱՆԱՆ ԵՒ ԱՆՍԵՂՆԵՐԸ Կ՝ԱՂՔԱՏԱՆԱՆ

Շարունակում է 15-էն

հոգիիդ և քեզ բաժանէ Տիեզերական իմաստութեանէն:

Ի՞նչպէս կրնայ սիրտ մը իր տրոփումներով քաղցրացնել կեանքը, երբ մէջը հիւանդ ու հաշմած է Աւետարանին հաւատքը:

Երբ Աստուած կը ջնջես կեանքէդ՝ կը դառնաս անպաշտպան որբ մը. Անառիկ Որդիին խոգարած մը աշխարհի մարդոցմէ նզովուած:

Աստուած առանց կեանքի, կեանքը առանց Աստուծոյ, հոգիին մարտիրոսություն է:

Սատանան, որ մեղքին բռնակալն է, իր գոհերը կ'որսայ իր մէկ ձեռքին հինգ մատները միայն գործածելով:

Երկու մատներով կը գոցէ գոհին աչքերը, որ չտեսնէ Աստուծոյ լոյսը, միւս երկու մատներով կը փակէ անոր ականջները, որ չլսէ

Աւետարանին պատգամները և հինգերորդ մատն ալ կը դնէ անոր շրթունքներին վրայ և կ'ըսէ, ետեւէս եկուր:

Եւ միամիտգործ կողք, խուլ, համր կը հետևի սատանային ու իր լարած ծուրակին մէջ կ'իջնայ ու կը կորուի: ՄԵՂԱԽՈՐՆԵՐԸ, կ'անիրաւեն ու կը հարստանան և ԱՆՄԵՂՆԵՐԸ, կը տուժին ու կ'աղքատանան:

Դուք լսե՛ր էք, որ հայ բարեպաշտ հոգեւորականը իր համեստ թոշակով և անկայուն պաշտօնով՝ հարստանայ և մեծահարուստի կոչում ստանայ:

Հեռաւոր և մերձաւոր անցեալը ցոյց չի տար նման նիւթապաշտ մը՝ կրօնական ասպարէզի մէջ: Բայց ներկայի կը յայտնաբերէ քանի մը շլացուցիչ նմուշներ, որոնք ճշմարտութեան ճանապարհին վրայ մեղանչելով՝ յաջողած են ճառագայթել Կրեոսոսեան կատարներու վրայ:

ԸԱՋ ՆԱԶԱՐ ՈՒԴՈՂ ԵԹԵՐ ԾՕ
Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:00
Կլէմտէյլի 26-րդ կայանից

OPTIMA LX

More Power, V6

Buy For **\$179** Per Month

1 AT THIS PAYMENT

+89¢ per month. 84 payments at 5.99% APR financing on approved above-average credit. \$4956 customer down payment + \$2000 factory rebate equals \$2956 total down payment. Sale price \$17,296.04

SORENTO EX 2WD

New 2006 KIA

\$7,995

1 AT THIS NET SAVINGS

\$7,995 net savings off MSRP includes a \$4000 Factory Rebate, \$2550 GK discount and \$1000 Competitive Bonus.

NEW 2007 KIA RIO

Sale Price.....\$8495
Factory Rebate.....-\$500

1 AT THIS NET COST

The Kia Red-Tag Lease-A-Thon

With Low Down Payment

NEW 2007 KIA SPORTAGE LX

5-STAR CRASH SAFETY RATING
National Highway Traffic Safety Administration

Auto, PW, PL

Lease For Only **\$129** Per Month

1 AT THIS PAYMENT

+66¢ & tax per month. 36-month closed-end lease on approved above-average credit. Cash from customer \$299.99 + \$0 Security Deposit + \$1000 lease cash. *Must finance thru Amd Credit. \$3999 total drive-off less the \$1000 lease cash. †Includes tax & license. ‡\$5 per miles in excess of 12K miles per year.

NEW 2007 KIA RONDO

Great MPG & Great MPG Plus! (variable on all trims except base model)

Use the 3rd row to seat up to 7 people!

Auto, PW, PL

Lease For Only **\$159** Per Month

1 AT THIS PAYMENT

+94¢ & tax per month. 36-month closed-end lease on approved above-average credit. Cash from customer \$299.99 + \$0 Security Deposit + \$700 Over Loyalty equals \$3700 total drive-off less the \$1000 lease cash. †Includes tax & license. ‡\$5 per miles in excess of 12K miles per year.

NEW 2007 KIA SPECTRA EX

Auto, PW, PL

Lease For Only **\$134** Per Month

1 AT THIS PAYMENT

+66¢ & tax per month. 36-month closed-end lease on approved above-average credit. Cash from customer \$299.99 + \$0 Security Deposit + \$750 lease cash. *Must finance thru Amd Credit. \$3749.99 total drive-off less the \$1000 lease cash. †Includes tax & license. ‡\$5 per miles in excess of 12K miles per year.

NEW 2007 KIA SORENTO LX

5-STAR CRASH SAFETY RATING
National Highway Traffic Safety Administration

Auto, PW, PL

Lease For Only **\$174** Per Month

1 AT THIS PAYMENT

+66¢ & tax per month. 36-month closed-end lease on approved above-average credit. Cash from customer \$299.99 + \$0 security deposit + \$2000 lease cash. *Must finance thru Amd Credit. †Includes tax & license. ‡\$5 per miles in excess of 12K miles per year.

NEW 2007 KIA OPTIMA LX

Auto, PW, PL

Lease For Only **\$139** Per Month

1 AT THIS PAYMENT

+66¢ & tax per month. 36-month closed-end lease on approved above-average credit. Cash from customer \$299.99 + \$0 Security Deposit + \$1500 lease cash. *Must finance thru Amd Credit. †Includes tax & license. ‡\$5 per miles in excess of 12K miles per year.

NEW 2007 KIA SEDONA

5-STAR CRASH SAFETY RATING
National Highway Traffic Safety Administration

Auto, PW, PL

Lease For Only **\$209** Per Month

1 AT THIS PAYMENT

+66¢ & tax per month. 36-month closed-end lease on approved above-average credit. Cash from customer \$299.99 + \$0 security deposit + \$1500 lease cash. *Must finance thru Amd Credit. †Includes tax & license. ‡\$5 per miles in excess of 12K miles per year.

2242 San Fernando Road, LA 90065

TOLL FREE: **866-211-8000**

SE HABLA ESPAÑOL

10 YEAR
100,000 MILE
WARRANTY

College Grads
Ask about our
\$400
Bonus Rebate!

GLENDALE

The Power to Surprise™

#1 VOLUME KIA DEALER IN CA!

All advertised prices exclude government fees and taxes, any finance charges, any dealer document preparation charge and any emission testing charge. All vehicles are on approval of credit. Rebates are not to be used with any special APR programs. Kelley Blue Book prices are based on July/August '07 Kelley Blue Book. Offer ends the close of business date of publication.

VIEW PICTURES

Check Out These Vehicles & More @:

www.glendalekia.com

Pre-Owned Vehicle MSRP Air Price or Buy For

Pre-Owned Vehicle	MSRP	Air Price	or Buy For
'04 Kia Spectra LS SUV (K71028B/303948)	\$870	\$645	\$75 Mo
'03 Mitsubishi Diamante LS SUV (K61806A/011735)	\$14,665	\$10,955	\$165 Mo
'02 Toyota Camry SUV (P610715/040786)	\$14,130	\$11,955	\$182 Mo
'03 Nissan Frontier Supercharged King Cab (P610244/27397)	\$15,210	\$13,455	\$205 Mo
'04 Mazda RX-8 Coupe (P70518/108875)	\$18,165	\$14,455	\$230 Mo
'05 Mazda3 S (P20255/16455)	\$20,255	\$16,455	\$265 Mo
'03 Toyota Highlander SUV (P19675/16455)	\$19,675	\$16,455	\$265 Mo
'05 Suzuki XL-7 SUV (P70373/105205)	\$20,805	\$16,455	\$265 Mo
'05 Scion iC Coupe (P19230/16955)	\$19,230	\$16,955	\$279 Mo
'05 Honda Element LX SUV (K70546/0406382)	\$21,360	\$17,455	\$285 Mo
'05 Jeep Wrangler SUV (P71190/18455)	\$21,190	\$18,455	\$304 Mo
'03 Infiniti I35 SUV (P60112/103945)	\$19,465	\$18,455	\$305 Mo
'04 Lincoln LS V8 SUV (P50165/66571)	\$23,475	\$19,955	\$335 Mo
'04 Kia Spectra LS SUV (K71028B/303948)	\$870	\$645	\$75 Mo
'02 Mercedes-Benz C320 WGN (P50745/151085)	\$22,050	\$21,455	\$367 Mo
'03 Toyota Sequoia SR5 (P50488/138634)	\$24,205	\$22,455	\$385 Mo
'02 Lexus RX300 SUV (P60211/288749)	\$25,435	\$22,955	\$395 Mo
'05 Acura TSX SUV (P25565/23965)	\$25,565	\$23,965	\$411 Mo
'04 Infiniti G35 CP (P70354/803738)	\$28,125	\$24,455	\$420 Mo
'05 Chrysler Crossfire Limited (P26300/24455)	\$26,300	\$24,455	\$424 Mo
'05 Infiniti G35 CP (P70635/057759)	\$29,310	\$26,455	\$460 Mo
'05 Audi A4 2.0T SUV (P70419/188354)	\$30,635	\$27,455	\$482 Mo
'05 Ford Thunderbird 5th Anniversary (P35910/28455)	\$35,910	\$28,455	\$502 Mo
'04 Infiniti FX45 SUV (P70310/106388)	\$35,310	\$28,955	\$507 Mo
'04 BMW 525i SUV (P70540/400383)	\$35,640	\$32,955	\$589 Mo
'04 BMW 745Li SUV (P70356/054963)	\$55,650	\$45,955	\$841 Mo